# ԾԻԼՆ
# ԱՒԱՐԱՅՐԻ

## Ա. ՏԱՐԻ 1866 ԹՒԻ Գ.

### ՄԱՐՏ

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

### ՀԱՅՆՑՈՒԱԾՔ ՆԱԽՆԻ ԵՒ ԱՐԴԻ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ ՎՐԱՅ ԱՌՀԱՍԱՐԱԿ

Ո՛Վ որ, քիչ շատ ծանօթ է տիեզերական պատմութեան հետ, կարող է հռովմայեցւոց Օգոստոս կայսեր կամ Քրիստոսի ծննդեան ժամանակէն, մինչև Կոստանդիանոս և Թէոդոս կայսրների կամ եկեղեցւոյն աղատութեան և խաղաղութեան ժամանակը, ծանօթ եղած աշխարհիս վիճակը ճանաչել։ Օգոստոսի եւ նրամէն յետոյ եղած կայսրներու ժամանակ՝ մի տեսակ լուսաւորութիւն աշխարհիս վրայ բոլորովին տարածուել էր։ Իդալիա, Յունաստան, հարաւային Ֆրանսիա, Սպանիա, Եգիպտոս, փոքր Ասիա, Թրակիա և ուրիշ տեղեր դրա նշմարանքը կ'երեւին։ Բայց թէ այդ ի՞նչ լուսաւորութիւն էր, այսօր ենք հասկանում, որ դա՝ մի նիւթական կամ մարմնաւոր լուսաւորութիւն էր, որ այն ժամանակ էր վերջին կատարին հասաւ և իր կերպարանքն ու հան-

դամանքն ամեն տեղ միեւնոյնը ցոյց տուաւ. թէ կառավարութեան, թէ քաղաքականութեան, թէ ճարտարութեան եւ թէ դրականութեան մէջ։ Բայց երբ, այդ նիւթական կամ մարմնաւոր լուսաւորութեան մնունդ եւ կեանք տուող զօրութիւնը տկարացաւ, այդ լուսաւորութիւնն էլ յանկարծակի չիջաւ ու յանգաւ. նրա համար, որ իրմէն կենսական տարերքը պակասում էին. այս տարերքն էին, ազգայինը, բարոյականն ու մտաւորը։ Ահաւասիկ ի՞նչպէս։ Հռովմայեցւոց կայսերական իշխանութիւնը, որն որ սիրուել էր իբրեւ մի ուռկան այն ժամանակուայ ծանօթ եղած աշխարհիս վրայ՝ հալվում ու մաշվում էր, թէ ներսուանց եւ թէ դրսուանց։ Այս հալումաշութիւնն իրան անկարող էր անում իբրեւ մի ծեր մարդու, այն ընդարձակ աշխարհների եւ մեծամեծ ազգերի վրայ իշխելու։ Ուստի ինչպէս ինքը, նոյնպէս և իրան ներկայացնող իշխանութիւնքն էլ աշխարհների ու ազգերի վրայ, իրան պէս հիւծուել ու դաձուել էին։ Կայսրութիւնն ամեն միջոց ձեռք առաւ նորէն զօրանալու և արիանալու. սաստիկ հալածանք քրիստոնէից դէմ, չլսուած կոտորած ապստամբ ազգերի վրայ, աքսոր, թոյն, սղոց, քաջարի իշխանները զսպելու համար, ամենեւին չյաջողեցաւ. հակառակը փորձեց, բռնութեան տեղ քաղցրութիւն սկսաւ բանեցնել, իր իշխողութեան տակն եղող աշխարհներին ու ազգերին ազատութիւն, արտօնութիւն տուաւ և նրանց իբրեւ Հռովմայեցի ճանաչեց, բայց և այնպէս չյաջողեցաւ, և օրէ օր աւելի ծերանալով, աւելի անկարող եղաւ կառավարելու. մինչեւ որ վերջապէս կործանեցաւ, իրա հետ միասին եւ իր լուսաւորութիւնը։

Ի՞նչ էր այս բանիս գլխաւոր պատճառը. իր բարոյական նշանակութիւնը կորցունելը, իր իշխողութեան տակն եղող ժողովրդին աչքին առջեւ, նրա խելքին մէջ և նրա զգացողութեան նկատմամբ։ Հռովմէական ահագին կայսրութիւնը յաղթուեցաւ ու կործանեցաւ մինչեւ այն ժամանակ անծանօթ եւ անհերեւոյթ մի զօրութենէ. ո՞րն էր այս զօրութիւնը, քրիստոնէից բարոյական լուսաւորութիւնը։ Մինչեւ Հռովմէական կայսրութեան փառաւոր ժամանակներն աշխարհս տեսել էր և ճանաչելով նիւթական կամ մարմնաւոր լուսաւորութիւն

Այս միջոցին սկսաւ բարոյական լուսաւորութեան թագաւորութիւնը Հռովմէական Աշխարհին վրայ, ինչպէս նաեւ մեր հայրենի Աշխարհի վրայ։ Երկար ժամանակ փառաւորութեամբ տեւեց իր թագաւորութիւնը և մի անկործանելի շատակ կանգնեց՝ այն է Եկեղեցին։ բայց ժամանակների յաջորդութիւնը, ազգերի տեղափոխութիւնը, սերունդների այլայլութիւնը, վերջապէս շատ այլեւայլ հանգամանք, դիպուած, որոշութիւնք ցոյց տուին, որ այդ բարոյական լուսաւորութենէն էլ պակասում էր մի տարր։ այդ տարրն էր՝ մտաւորականը, որն որ իրան հետ միաւորելու համար, ժամանակն իրան բերաւ, բայց մինչեւ այդ կէտին հասնելու համար այն աշխարհների և ազգերի մէջ, որ տարածուեցաւ, մի կրպիտ նիւթական զօրութեան պատահեցաւ, որն որ շատ աւելի վատթար էր քան հռովմէական սուրն ու թուրը։ Զենք իմանում ինչ կը լիներ, եթէ այն ժամանակները քրիստոնէից բարոյական լուսաւորութիւնն մի եկեղեցիով կանգնած ու հաստատուած չլիներ այդ կրպիտ ուժին դէմ իրան պաշտպանելու համար։ Արդ Եկեղեցին, քրիստոնէից ընկերականութեան բարոյական լուսաւորութիւնն աղատեց Եւրոպիում հիւսիսային բարբարոս ասուած ազգերի վայրենականութենէ, ինչպէս էլ Ասիայում արեւելեան հնդկական լուսաւորութեան յարձակումէն։ Բայց աղատեց թէ չէ՝ յանկարծ հոգեւորով և մարմնաւորով խառն մի նոր լուսաւորութիւն աշխարհիս վրայ երեւան եկաւ։ Այս երկու տարերքով խառն լուսաւորութեան և լոկ բարոյական լուսաւորութեան մէջն եղած պատերազմն երկար տեւեց։ Ասիա, Աֆրիկէ և Եւրոպա հոգեւոր և մարմնաւոր լուսաւորութիւնն ամեն կերպով տիրապետում և հաստատվում էր, ո՛ր տեղ որ, մի հոգեւոր իշխանութիւն էիր տեսնում՝ նրա կշռին էլ մարմնաւոր զօրութիւնը զէնքը ձեռին կանգնած էր։ ուստի իր իշխողութեան տակն ընկան, ոչ միայն ազգային եւ քաղաքային ընկերականութիւնք, այլ նաեւ՝ գիտութիւնք, դպրութիւնք և արհեստները։ Մեր կիսագնտին վրայ եօթներորդ և ութերորդ դարերէն սկսաւ բարոյական լուսաւորութիւնը կերպարանք փոխել ու հետզհետէ բոլորովին մարմնաւորեցաւ, ինչպէս մինչեւ այսօր էլ մեր աչքով տես-

նում ենք նրա մնացորդքը։ Մի խօսքով, քրիստոնէից ընկերականութեան բարոյական լուսաւորութեան բանը պրծած էր՝ թէ որ իրմէ պակաս տարերքն այն է մնաւորական լուսաւորութիւնն իրան օգնելու չհասնէր։ Մտաւորական տարերքը մեծ ուժ և սնունդ տուաւ բարոյական լուսաւորութեան և իրար հետ միաւորուելով յառաջ եկաւ Յառաջդիմութիւն ասուած իրողութիւնը։

Արդ՝ տեսանք ու ճանաչեցինք հիմա երեք ամենակարեւոր տարերքը, որոնք լուսաւորութիւնը բաղկացնում են. առաջինն է, Բնական, որ մենք մերթ ասում ենք, ազգային, ընկերական և քաղաքային, այսինքն մի աշխարհի և նոյն աշխարհումը բնակող ժողովրդի սեպհական եղածը. երկրորդն է, Բարոյական կամ Հոգեկանը, որն որ առհասարակ ամեն աշխարհների և ազգերի համար և կամ որ և է մարդկային կամ ազգային ընկերականութեան միեւնոյն է, որուն աղբիւրը, ինքն Աստուած է, որն որ հաղար հաղարաւոր միջոցներով մարդուս հոգւոյն մէջն է դրել, աչքին առջեւ բաց է արել և խելքին մատչուն է արել. երրորդն է Մտաւորը, որն որ, ինչպէս ասացինք բնականին և բարոյականին հետ միաւորելով անում է նրան՝ ոչ թէ միայն կենդանի, գործուն, հաստատուն, այլ նաեւ դարէ դար տեւական, սերունդէ սերունդ զարգացող և որու իրողութեանն ենք ասում յառաջադիմութիւն։

Թո՛ղ ընթերցողը, աշխարհիս ամեն ազգերի պատմութիւնը միաը բերէ, ամեն ժողովրդների վիճակն աչքին առջեւ պատկերացնէ, կը տեսնէ Ասիոյ ազգերի ընկերական կեանքին մէջ հոգեւոր կամ բարոյական լուսաւորութիւն, առանց ազգային և ընկերական կերպարանք ունենալու, կամ թէ չէ ազգային կամ ընկերական, առանց բարոյականի և մտաւորականի, հետեւաբար առանց յառաջադիմութեան իրողութիւնն իրանց մէջ իբրեւ կենսատու տարերք ունենալու։ Այսպէս են եղել դրեթէ Ասիոյ բոլոր ազգերը և մնացել միշտ անշարժուն իբրեւ մի սարուց. այսպէս եղել են նաեւ Եւրոպոյ հին և նոր ազգերը նրա համար, որ այս երեք տեսակ տարերքներէն մինը կամ միւսը պակասել է իրանց լուսաւորութենէն. իսկ մենք Հայքս, արեւելեան ազգերի

մէջ ունեցել եմք մի միայն ազգային և բարոյական, թէ Քրիստոսէ յառաջ և թէ ետքը, ինչպէս որ պիտի տեսնենք յետոյ. մտաւորական, ինչպէս շատ ազգերէն նոյնպէս և մերինէն պակասում էր այն միջոցին, երբ բարոյական լուսաւորութիւնը դրեթէ իր կարողութեան վերջին կատարը հասել էր մեր նախնեաց մէջ։ Մտաւորական լուսաւորութիւնը նոր բան է, մի քանի դար հաղիւ ունենայ իր պատմութիւնը բայց և այնպէս ծնած ունի իրմէն յառաջադիմութիւնը, թէ ի՞նչ է յառաջադիմութիւն՝ կամք է մեզ այս տեղ մի փոքր երկարօրէն պարզել։

Թէ որ մենք մի հարցում անենք մեզումեզ՝ թէ ի՞նչ է յառաջադիմութիւն կամ զարգացողութիւն։ Այս յետագայ պարզ պատասխանը կարող ենք առնել մեզմէ. Կրկնակի յառաջադիմութիւն բարոյական և մտաւորական։ Առաջինը մարդկային և ազգային պարտականութեանց վերաբերող, երկրորդը նրանց դիտակցութեանց։ Ցարակոյս չկայ, որ մարդիկ կամ մի ազգ չյառաջանայ կամ չզարգանայ թէ և իր ճարտարութեան զարգացողութեան հետ միասին մաքրութեանց աճեցողութիւնն էլ ունենայ իր մէջ, կամ թէ միւս կողմէն իր բարոյական առաքինութեամբն ունենայ նաեւ իր տգիտութիւնն ու անուսումնութիւնը։ Բայց յառաջադիմութեան մէջ դէպի լուսաւորութիւն անպատճառ հարկաւոր են երկու շարժողութիւն, բարոյական և մտաւորական։ Կատարել մարդկային կամ ազգային պարտականութիւնքը, յառաջադիմութեան բարոյական մասն է անշուշտ. բայց դիտենալ թէ ի՞նչպէս պէտք է կատարել դրանք՝ մտաւորականն է։ Ուստի, քանի որ այս երկու իրողութիւնքը լուսաւորութեան մէջ իրար հետ միացած ու միասին դէպի մի նպատակ կը դիմեն, այնքան յառաջադիմութիւնը դէպի լուսաւորութիւն յաջող կը լինի, հատատուն հիմունք կը դնէ մարդկային և ազգային ընկերականութեան կեանքի համար։ Այս այսպէս լինելուց յետոյ, մի խնդիր կը մնայ մեզ համար խմանալ թէ, ո՞րն է, այս երկու տարերքներէն, այսինքն բարոյական լուսաւորութենէն՝ և մտաւոր լուսաւորութենէն՝ ամենէն աւելի կարեւորը մարդկային կամ ազգային կեանքի համար։ Որովհետեւ յառաջադիմութեան իրողութիւնը սրանց կըրկ-

նակի գործողութենէն է յառաջ գալի, հարկ է որ հաստատելով ցոյց տանք, թէ ոՐն է աւելի զօրութեամբ ներգործողն, որպէս զի երկուսէն որն որ միւսն է առաջնորդում՝ նրան աւելի կարեւորութիւն տանք կամ թէ մինը միւսով զօրացնենք ու ամրացնենք։ Թէ որ մարդկանց կամ ազգերի լուսաւորութիւնը և բարեբաղդութիւնը կախուած է աւելի իրանց բարոյական զգացողութենէ քան թէ մտաւորական ճանաչողութենէ։ Պէտք է որ բնականօրէն այն մարդկային կամ ազգային ընկերականութեան յառաջադիմութիւնը՝ նրա այդ զգացողութեամբն ուղղել, իսկ թէ որ կախումն ունի հէնց միայն իր ճանաչողութենէն, նրա մտաւորական կարողութեան զարգացողութիւնն է որ նրա լուսաւորութեան գլխաւոր սկզբունքն ու ուղղութիւնը պիտի լինի։ Միանգամ, որ ճանաչենք այս երկու զօրութեանց ազդեցութիւնը, նոյն ժամանակ նաեւ կարող կը լինինք ճանաչել ճշմարիտ լուսաւորութիւնը և չենք շփոթուիլ բարոյական և մտաւոր լուսաւորութիւն ասմունքին ծանր և մոլար հետեւանքների մէջ ընկնելու. և այն ժամանակ նաև կարող էլ կը լինինք մեր հայրենի աշխարհի և մեր նախնեաց լուսաւորութեան և նրա վարդապետների գործերն ու արդիւնքը արդարութեամբ տեսնել ու քննել։ Բարոյական և մտաւորական լուսաւորութիւն ասելով, առ հասարակ մենք կարծում ենք, որ մեր բարոյական և մտաւորական կարողութիւնը քանի որ լուսաւորութիւնը յառաջ է գնում՝ այն էլ, աւելի առողջ, աւելի գործօն և աւելի անսխալ ու անմոլար է լինում քան թէ յառաջուայ ժամանակները։ Թէ և այս ճշմարիտ լինի մէկ կողմէն, բայց երբէք փորձով հաստատուած չէ և ապացոյցով էլ վկայուած։ Կարելի էլ է մեղ ասում լինին, կորովամիտ մարդիկ թէ՝ մարդուս ուղեղի զօրութիւնը քանի գնում է աւելանում է, և առանց գաստիարակութեան կարող է լինում աւելի զօրաւոր դատողութիւն ստանալ։ Բայց այս մասին այնքան տկար է այժմեան մարդկային գիտութիւնը բնական գիտութեանց մէջ, որ մարդուս ներքին առանձին հանգամանքների մասին այդպիսի խնդիր չէ կարող բաց անել։ Ուստի և այդ յառաջադիմութիւնը բոլորովին երկբայելի կը համարուի և չէ կարելի ընդունել թէ մի յարատեւ

կատարելութիւն կայ այսօր մարդուս բարոյական և մտաւորական ֆիզիկական կարողութեանցը մէջ, վասն զի ոչ մի որոշ ու յայտնի պատճառների վրայ հիմնուելով կարող չենք ասել թէ Եւրոպոյ ամենակիրթ աշխարհի կամ ազգի մէջ ծնած մի երեխայի մարդկային կարողութիւնն աւելի զարգացած է լինում, քան թէ մի ամենավայրենի աշխարհի կամ ազգի մէջ ծնած երեխայինը։

Արդ ուրեմն, այսօր մարդկային ազգի բարոյական և մտաւորական յառաջադիմութիւնն ինչպէս որ լինի, ոչ թէ մարդուս բնական կարողութեան յառաջադիմութիւնն է, այլ արտաքին հանգամանքների կատարելութեան, որոնց մէջ երեխայի կարողութիւնը զարգանում է իր ծնելէն յետոյ։ Այս տեղն է խնդրին կարեւոր կէտը, արտաքին կարողութիւնն է և ոչ ներքինը յառաջադիմութիւն անողը։ Մի երեխայ քաղաքակիրթ կամ լուսաւոր երկրում ծնելուն համար, չէ նշանակում որ դերազանց է լինում միւս երեխայէն որ բարբարոսների մէջն է ծնել։ Այս երկու երեխանց մէջն եղած զանազանութիւնը յառաջ է գալի միմիայն, որքան որ կարող ենք դիտենալ, արտաքին հանգամանքներէն, այսինքն ասել ենք ուզում, մարդկանց ծանօթութեանցմէ, դիտութեանցմէ, ընկերութենէ, կրթութենէ, մի խօսքով այն մտաւոր մթնոլորտէն և այն մարմնաւոր կեանքէն, որու մէջ այս երկու երեխայքը ծնել են ու ապրում մեծանում են։

Ցայտնի է, որ մարդկանց բարոյական և մտաւորական բարքն ու վարքը միշտ առաջնորդուած է իրանց ժամանակին անցնող եւ իշխող բարոյական և մտաւորական տեղեկութեանցմէ և դիտութեանցմէ։ Բայց բնականօրէն շատ մարդիկ կան, որ այս տեղեկութեանց և դիտութեանց կատարէն շատ վերեւ կը բարձրանան. ինչպէս շատ մարդիկ էլ կան, որ նրանց հորիզոնէն ներքեւ կը ցածրանան։ Բայց և այնպէս բարձր թռչող մարդիկն իրանց ժամանակուայ տիրապետող կարծիքներէն և հայեցուածքներէն ընդհանուր մարդկանց մէջ շատ փոքրիկ մի մասն են կազմում։ Մարդկանց մի մեծ մասը մնում են և կը մնան միշտ, մի միջին վիճակի մէջ, ոչ սաստիկ յիմար, ոչ սաստիկ խելօք, ոչ սաստիկ առաքինի, ոչ սաստիկ մոլի։ Այլ իբրեւ թմրած՝ խաղաղութեան

և չափաւորութեան մէջ անշարժուն և անփոփոխ կը մնան, ոչ մի կերպով նշանաւոր չեն լինել՝ ոչ բարութեամբ, ոչ վատութեամբ և ոչ քաջութեամբ, կընդունին առանց մի մեծ դժուարութեան իրանց օրերումն եղած գաղափարներն ու զգացմունքներն առանց նրանց ծագումին և նպատակին պատճառներն իմանալու համար հետամուտ լինելու։ Իրանց բարոյական կեանքի հանգստութեան համար երբէք մի դայթակղելի բան էլ չեն անել ու միշտ իրանց ժամանակուայ ընկերութեան վրայ երեւան եղող մարդկանց հաւասար կը պահեն իրանց։ Մի խօսքով առանց ձայն ու ձպտուն հանելու, յարմարուելով այն դարուն այն երկրին, այն ազգին հասարակ եղած բարոյական և մտաւորական դիտութեան և ծանօթութեան հետ, որոց մէջ կեանք են վարում։

Մի վերիվերանց ճանաչողութիւն բաւական է պատմութեան մէջ, իմանալու համար մեր ասած վիճակի օրինակը և նոյն օրինակին՝ ամեն դարու, ամեն երկրի և ամեն ազգի մէջ տարբեր լինելը և սերունդէ սերունդ և դարէ դար փոփոխուիլը նոյն աշխարհի և նոյն ազգի մէջ։ Ինչ են.ք հեռու դնում, այն կարծիքներն որ ժողովրդային են մի ազգի մէջ այս տարի, փոփոխվում են շատ կողմանէ միւս տարին։ Ինչ բան որ մի ժամանակ իբրեւ մոլորութիւն կամ հերձուածողութիւն է համարվում մի ուրիշ ժամանակ էլ իբրեւ ճշմարտութիւն է ընդունվում և յետոյ այդ ճշմարտութիւնն էլ իր նոր հետեւանքներն է ունենում։ Մարդկանց վիճակին այս օրինակին յարատեւ փոփոխականութիւնը, որու վրայ մարդիկ իրանց բարքն ու վարքն են օրինակում ցոյց է տալի որ՝ ինչ բաներով որ այդ օրինակը շինում ու լինում է, շատ անհաստատ և՝ շատ անկայուն են։ Վասն զի արդ բաներն ինչ որ են, յայտնի է որ սկիզբ և պատճառ են մարդկանց մեծ մասին բարոյական և մտաւորական բարքին ու վարքին։

Այս հայեցուածքով կարող են.ք դիտենալ, որ մարդկանց բարքին ու վարքին նրանց գործքերին և խօսքերին պատճառները շատ ու շատ փոփոխական են։ Մի փորձ անեն.ք այս մասին. վեր առնեն.ք մի հանգամանք, որ այս փոփոխական պատճառներէն մինը լինի, թէ որ կը տեսնեն.ք, որ

այդ հանգամանքը շատ փոփոխական չէ, այն ժամանակ կը հետեւայնենք ասելով թէ, նրանք չեն մեր վնասուած պատճառները։

Օրինակի համար բարոյական պատճառները կամ թէ հրահանդները, տեսնենք ինչ ազդեցութիւն են արել լուսաւորութեան յառաջանալու համար։ Վասն զի անուրանալի է, որ աշխարհիս մէջ ոչ ինչ չկայ, որ այնքան անփոփոխ մնայ որքան այն վարդապետութիւնքը, որ բարոյականութիւն են կազմում։ Ուրիշին բարիք անել, իր ընկերին անձնուէր լինել, նրան իր անձին նման սիրել, իր թշնամեաց ներել, կերքերին յաղթել, ծնողքին յարգել և այլ սրանց նման սքանչելի կանոններն են բարոյականութեան էական կէտերը. բայց ահա հազար տարիէն աւելի է, որ կը ճանաչեմք դրանք, քարոզներ, ճառեր, խօսքեր, վերջապէս ինչ որ բարոյաբաններն ու աստուածաբաններն յառաջ են բերել. միթէ՞ համեմատելով այդ բարոյական կայուն ճշմարտութիւնքը մտաւորական շարժուն ճշմարտութեանց հետ՝ այլեւայլութիւնը նոյնը կը դտնե՞նք։ Բատ մեզ ամենեւին ոչ, ընդհակառակը զանազանութիւնը զարմանալի է։ Այն ամենամեծ բարոյական դրութիւնքն որոնք շատ մեծ ներդործութիւն են արել լուսաւորութեան վրայ, հէնց սկիզբէն միեւնոյն են եղել. բայց այն ամենամեծ մտաւորական դրութիւնքը նոյնպէս իրանց սկիզբէն այլեւայլ են եղել։ Մեր բարոյական վարքին ու բարքին ինչ որ այսօր կը վերաբերի, ինչ սկզբունք որ ծանօթ է այսօր ամենէն լուսաւոր Եւրոպացւոց, նախնեաց էլ նոյնպէս ծանօթ էր։ Բայց ինչ բան որ մեր մտաւորական բարքին ու վարքին կը վերաբերի, ոչ թէ միայն այսօրուայ մարդիկ շատ աւելացուցին և մեծացուցին նախնեացմէ մնացած մանր մունր դիտութիւնքը, հապա նաև տակնուվրայով յեղափոխեցին քննողութեան և գնողութեան եղանակները, և նորերն աւելի հաստատուն և աւելի ընդարձակ հնարեցին, մի խօսքով այնպիսի գիտութիւնք ստեղծեցին, որոնցմէ նախնեաց մէջ ամենէն կորովամիտն ամենափոքր պատկերը չէր նշմարել։

Ամեն ուսումն ու գիտութիւն ունեցող մարդու համար, այս իրողութիւնքը ծանօթ է և նրանցմէ հետեւութիւն հանելը շատ հեշտ է. վասն զի այդ հետեւութիւնքն իրանք

իրանցմէ յառաջ կը դան։ Արդ որովհետեւ լուսաւորութիւնը արդիւնք է բարոյական և մտաւորական պատճառների, և թէ այդ արդիւնքն անդադար փոփոխվում է, յայտնի է, որ չէ կարելի նա միայն կայուն և անփոփոխ ներգործող պատճառէն առաջնորդուելով յառաջ դնայ. նրա համար, որ բոլորտիքն եղող հանգամանքները չփոփոխուելով, ներգործող մնացական պատճառը, միայն մի մնացական արդիւնք յառաջ կը բերէ։ Ուրեմն միայն մի ներգործող պատճառ է մնում լուսաւորութեան յարատեւ յառաջադիմութեան, այն է՝ բուն իսկ մտաւորական շարժիչ պատճառը, որն որ երկու կերպով կարող եմք ապացուցանել։ Ինչպէս որ տեսանք արդէն, յառաջադիմութեան շարժիչ պատճառն ու զօրութիւնը կամ բարոյական է կամ մտաւորական. բայց որովհետեւ տեսանք էլ որ միայն բարոյականը չէ բոլորովին, ուստի մտաւորականը պէտք է լինի. մտաւորական սկզբունքին մեծ աղդեցութիւն և մեծ կարողութիւն ունենալը լուսաւորութեան յառաջադիմութեան վրայ ցոյց տալը շատ հեշտ է. այն կարգէ դուրս զարդացողութեամբն որ Եւրոպա մի քանի դարերումն արաւ։ Բայց ուրիշ կողմնակի հանգամանքներ էլ կան, որոնք պէտք են որ նկատողութեան տակն ընկնին։ Մտաւորական սկզբունքն ոչ թէ միայն շատ աւելի դէպի յառաջ դիմող է քան թէ բարոյական սկզբունքը, այլ նաև նրա արդիւնքն ու հետեւանքը շատ աւելի տեւական և մնայուն են։ Մտաւոր կարողութեամբ ձեռք բերուած բաներն ամեն լուսաւոր և քաղաքակիրթ երկիրներումը մեծ խնամքով պահպանուած են, հարկ եղած կարգովն ու պայմանովը հաստատուած են և աւանդական լինելու համար էլ գիտնական և արհեստական մի առանձին բարբառով էլ ապահովուած, որն որ շատ հեշտութեամբ մէկ դարէն միւս դարը կամ թէ սերունդէ սերունդ կարող են լինում փոխանցնել և հետզհետէ աւելի դիւրըմբռնելի և դիւրաղդալի լինելով, յետոյ եկող սերունդին վրայ աւելի են ներգործում և մարդկային աղգի համար մի ժառանգութիւն են լինում, իբրեւ մի անմահական կտակ այն հանճարոյն կողմէն, որմէ ծնել ու աշխարհ են տեսել։ Բայց բարոյական սկզբունքին կարողութեամբ կատարուած լաւութիւնքն ու բարի բաները փոխանցնելու

համար մի ուրիշ սերունդի վրայ կամ մի ուրիշ դարու մէջ այնքան հեշտութեամբ չէ կարելի լինում աւանդել, նրա համար, որ առանձնական և անձնական են և իրանց բուն սկզբնական պատճառներն առհասարակ, անձնազոհութեան, անձնանուիրութեան և անձնայաղթութեան հետեւանքը լինելով ամեն մարդ իրան համար միայն պարտական է լինում կատարել, այնպէս որ շարունակութիւն կամ յաջորդականութիւն չունենալով այդ բարիքը փոքր օգուտ են յառաջ բերում և կարող չեն լինում այնպիսի մի հանք պատրաստել, որմէ յետագայ բարոյագէտները միշտ կարող լինին նոր նոր բաներ քաղել։ Սրամէն հետեւում է, որ՝ որքան բարոյական կատարելութիւնն աւելի շնորհալի, աւելի ճաշակելի և աւելի տենչալի է մարդկային ընկերականութեան համար, քան թէ մտաւոր կատարելութիւնը. սակայն և այնպէս պէտք է ճշմարիտն էլ ասել նրա վախճանական հետեւանքը նկատելով ոչ այնքան ազդու, ոչ այնքան տեւական և ոչ այնքան էլ ներգործուն է, և ինչպէս էլ պիտի ցոյց տանք հիմա և ոչ այնքան էլ իսկական օգուտներ ունի, ինչպէս մտաւորականը։

Այս ամենքին հաւանականութեան իբրեւ ապացոյց, վերառնենք մենք յառաջ մեր Հայաստան աշխարհի բարոյական ըստաւորութիւնը, որուն հաւասարող, այն ժամանակ այսինքն չորրորդ, հինգերորդ և վեցերորդ դարերումը ոչ մի աշխարհ չէ կարելի ցոյց տալ մեր կիսագնտին վրայ, բայց ի՞նչ թողուց իրմէ յետոյ այն բարձր կատարէն՝ ուր հասել էր, հայկական սերնդին վրայ, մի միայն բարոյական առաքինութեանց յիշատակներ, ինչպէս ասացինք անձնազոհներ, նահատակներ և այլ մեծամեծ դիւցազունք, որոնց այսօր մեր մէջ ինչ նշանակութիւն ունենալը յայտնի է։

Այս խնդրի մասին պարզ ու յստակ խօսելը շատ երկար լինելով խնդրում ենք մեր ընթերցողէն, որ մեզ ներէ դրա թէն ուրիշ անգամ մեր ձեռին առնել. հիմա մեզ խիստ մօտ եղած առարկաների վրայ դարձուցնենք մեր հայեցուածքը։ Մի նկատենք այս մի քանի դարերու միջոցում, Եւրոպիումն եղած մարդասիրական ջանքերն ու փորձերը, որոնցմէ աւելի ներգործուն, աւելի բարերար և աւելի բարեվախճան չէին կարող լինել։ Բայց թէ որ համեմատենք նրանց արած բա-

րիքը մտաւորական կարողութեան արած բարիքներուն հետ, նրանք շատ կարճատեւ, շատ մասնաւոր և շատ սակաւ կը գտնենք. և շատ անգամ էլ նրանք տեսնող և վայելող սերունդէն քիչ տեւական, և թէ որ հասարակաց ողջմտութեան համար հաստատուած հիմնաւոր կայանք են եղել, շատ շուտով անկարգութիւնը նրանց մէջն է մտել և կործանուելու մատեցուցել նրանք, յետոյ էլ կամաց կամաց բոլորովին իր նախնի նպատակէն փոխուելով կամ անհետացել կամ այլափոխուել են, դերեւ հանելով այն ջանքն որ ամենասուրբ բարերարութեան յիշատակը մշանջենաւորելու համար է եղած։ Այս իրողութեան հաստատուն ապացոյց և վկայութիւն, ոչ թէ միայն մեր երկիրներումը կարող ենք մեր աչքով տեսնել, մանաւանդ մեր Հայաստանի եկեղեցեաց, վանօրէից, անապատների, քարայրերի, խաչաքարերի, ապառաժների և այլ շէնքերի արձանագրութեանց մէջ, այլ նաեւ բուն իսկ Եւրոպա դրա ապացոյցներ մեր աչքին առջեւ կը հանէ այսօր։

Այս եղրակացութիւնքը հերքելը բաւականին դժուար է, կարելի է ասել և անհնարին. վասն զի, որքան այս խնդրի մէջ մարդ մտնէ, այնքան աւելի կը տեսնէ մտաւորական կարողութեան դերազանցութիւնը բարոյական զգայողութեան վրայ։ Չես կարող մի տգէտ և անմիտ մարդ գտնել, որ ոգեւորուած աղնիւ դիտաւորութեամբ և զինուած ծայրագոյն իշխանութեամբ իր այդ աղնիւ դիտաւորութիւնքը գործադրելու համար, աւելի վատութիւն և աւելի չարութիւն արած չլինի քան թէ լաւութիւն ու բարութիւն։ Իր արած վատութեան ու չարութեան չափն այնքան մեծ է եղած, որքան որ իր դիտաւորութեան եռանդն ու իշխանութեան սահմանը մեծ են եղել։

Բայց այդ դիւահարուած մարդուն եռանդը որ, սառեցընես, միեւնոյն ժամանակ նրան անելու վատութեան էլ մի սահման կը դնես. իր տգիտութիւնը, թէ որ եսականութեամբ էլ կրկնապատկել է, կարելի է որ նրա տգիտութիւնն էլ ճընշես ու մոլութեան միջոցով նուաճես և ահ տալով նրա սարսափելի գործողութեանց էլ մի չափ դնես։ Բայց և այնպէս թէ որ այդ տգէտ, անմիտ և մոլի մարդը, ոչ ահ դիտէ և ոչ ուրիշ բան և իր կամակատարութիւնը լիովին է ու միան է

դրել իր նպատակին որ և է կերպով լինի, հանել, այն ժամանակ թոյլ տուր նրան, վասն զի ոչ մի կերպով նրա վրայ չես կարող ներդործել, ոչ ինչ հնար չունիս քո ձեռին դէմ դնելու դրա անելու ձախորդութեանց և թշուառութեանց, որով մի ազէտ ու անմիտ մարդ, մի ազէտ ու մոլի դարու մէջ անպատճառ յառաջ կը բերէ։ Այս օրինակ են ձախորդութեանց և թշուառութեանց պատճառների մեծ մասը, ինչպէս մեր հայրենի Աշխարհի պատմութեան մէջ, նոյնպէս և օտար աշխարհների պատմութեան մէջ. բայց արա՛ կրօնական հալածանքների պատմութիւնը, կարդա՛ մտադրութեամբ նրանք, կը տեսնես ինչպէս կը հաստատեն և կ'արդարացնեն մեր այս ասածը։ Պատժել մի մարդ իր կրօնի վարդապետութեանց համար, յայտնի է, որ չարաչար ու մեծամեծ մեղքերէն մինն է. բայց պատժել, բնաջինջ անել մի բաղմաթիւ հասարակութիւն, մի ամբողջ ազգ կամ ազանդ, ջանալ՝ իսպառ ջնջել այնպիսի համոզմունք և կարծիք, որոնք իրանց ճիւղերը դէպի դուրս են տարածել որ տեղէ, որ արմատ են բռնել, իբրեւ ցոյց և յայտնութիւն մարդկային հանճարոյն բերրիութեան ու շռայլութեան. սրանք ջնջելը՝ ոչ թէ միայն ամենէն ապականիչ և վնասատու գործերէն մինն է, որն որ մարդս իր մտքովն է անցուցել, այլ նաեւ խենթութեան և յիմարութեան վերջին ծայր կատարելութիւնն է։ Բայց սակայն անկասկածելի մի իրողութիւն է որ հալածիչների մեծ մասը, շատ բարի դիտաւորութեամբ ոգեւորուած մարդիկ են եղել որոնց բարքի եւ վարքի վրայ ոչ մի բան կարելի չէ եղել ասել եւ անկարելի էլ է ուրիշ կերպ լինէին։ Զարամիտ չեն կարող լինել այն մարդիկ, որոնք ջանք են անում իշխել մարդկանց վրայ այն կարծիքներով, որ իրանք համոզուելով հաւատում են թէ ճշմարիտ են դրանք։ Ուրեմն չէ կարելի այդ մարդկանց վատ կամ չար ասել։ Վատ ո՛չ, բայց ազէտ ու մոլի, այո՛։ Այս մարդկանց աչքին ճշմարտութեան որպիսութիւնն ու իրանց գործողութեանց հետեւանքն ամենեւին չեն երեւիլ։ Ճշմարիտ ասելով, շատ անդամ իրանց ջերմեռանդն է եղել իրանց մղող դէպ'ի հալածանք յարուցանել։ Այն ջերմ հաւատն ու համոզումն է որով կրակուելով մոլի են դառել եւ զարհուրելի արարմունքներ անելու են դիմել։

Մի մարդս դանդումը բարոյական կամ կրօնական ծայրագոյն կարեւորութեամբ մի համոզումամբացո՛ւ և ոնդացո՛ւ։ Հաւատացո՛ւ նրան, որ այդ վարդապետութիւնը չընդունողը յաւիտենական կորստեան դատապարտուած է։ Ցեռոյ տո՛ւր դրա ձեռին իշխանութիւն և այնքան ազդեցացո՛ւ նրան, մինչեւ որ բոլորովին կուրանայ և չտեսնայ իր գործողութեանցմէ յետոյ դալու հետեւանքները, անպատճառ այդ մարդը իր վարդապետութիւնն ուրացողներին ու մերժողներին սկսի պատժէ ու հալածէ, ու իր այդ պատիժն ու հալածանք այնքան մեծ պիտի լինին որքան, որ իր մոլեկրօնութիւնը մեծ ու պինդ է։ Սարեցու նրա մոլեկրօնութիւնը, կը չափաւորես եւ դրա հալածանքը։ Այս այն ճշմարտութեանցմէ մինն է որ պատմութիւնը մեր առջեւ անչափ օրինակներ է հանում, որ ուրանալը կը լինի, ոչ միայն մերժել ամենէն ակներեւ ապացոյցները, այլ նաեւ ամեն դարերու մէջ միեւնոյն ժամանակ պատահած վկայութիւնքը։ Բաւական ենք համարում երկու դէպք այս տեղ յիշել. առաջինը, հեթանոսութեան պատմութենէն վեր կառնենք, եւ երկրորդը քրիստոնէութեան պատմութենէն։ Այս երկու օրինակները մեզ կը համոզեն բաւականին, որ միմիայն բարոյական խմացողութիւնը չէ, որ կարող լինի կրօնական հալածանքին առջեւն առնել։

Ամեն մարդ դիտէ, որ Հռովմայեցւոց կայսրները շատ անդամ, շատ անգութ կերպով քրիստոնէից վրայ հալածանք յարուցին. բայց զարմանալին այն է, որ ամենէն կատաղի հալածողների մէջ, ամենէն առաքինի մարդիկն են դտնուել։ Մինչդեռ քրիստոնէից խնայողները և ամենեւին ուշադրութիւն չտանողներընրանց զարգացողութեան վրայ՝ հէնց ամենէն անպիտան, ամենէն վատահոգի և ամենէն ախտամոլ կայսրներն են եղել։ Ոչ մի կայսր, վատաբարոյութիւնն այնքան վերջին ծայր չտարաւ, ինչքան որ Գոմոտոս և Հեղիոգաբաղ կայսրները արին այդ բանը, սակայն սրանցմէ ոչ մինը քրիստոնեայքը հալածեց և ոչ նրանց դէմ ամենավոքր դիմադրութիւն արաւ. վասն զի շատ անհոդ էին ապագայի մասին, սաստիկ անձնապաշտ ու ընկղմած լինելով իրանց խայտառակ հեշտութեանց մէջ, իրանց անձը չէին նեղացնում թէ ճշմարտութիւնը պիտի տանէ յաղթանակը, եթէ ոչ մոլորութիւնը։ Բո-

ըրովին անհոգ ու անզգայ իրանց հպատակներին բարեկեցու-
թեան համար, ինչ վայթ էր իրանց մի կրօնի յառաջանալը,
որն որ, իբրեւ Հռովմայեցւոց կայսր պարտական էին իբրեւ
աղետալի և ամբարիշտ համարել այն։ Բայց ընդհակառակն,
տեսնում ենք, որ քրիստոնէութեան ամենամեծ թշնամին,
ամենաբարի կայսրն է լինում։ Մարկոս Աւրեղիանոս. այս
մարդն իր ժամանակուայ մարդկանց մէջ ինչպէս քաղաքակա-
նօրէն, նոյնպէս և բարոյապէս ամենէն առաքինի ու երեւելի
մարդն էր, բայց իր կայսրութեան ժամանակը նշանաւոր է,
քրիստոնէից դէմ եղած հալածանքով, որուն անշուշտ խա-
փանարար կը լինէր, թէ որ իր նախահարց կրօնն իր եռանդը
դրդռում չլինէր։ Վերջին հալածողը քրիստոնէութեան, որ
Հռովմէական դահլին վրայ նստաւ, Յուլիանոս ուրացողն էր,
սրա համար էլ կասէ պատմութիւնը թէ շատ խելօք ու ա-
ռաքինի մարդ է եղել թէ եւ քրիստոնեայ դարադրերը շատ
կը վատաբանեն նրա արարմունքը։

Քրիստոնէութեան ժամանակ Սպանիա թող լինի մեզ օրի-
նակ։ Ուր տեղ կրօնական զգայմունքը ամենէն մեծ ներդոր-
ծութիւն ունեցաւ մարդկային դործերի վրայ, որու նմանը
ոչ մի երկիր չէ եղել։ Աղդ չկայ Եւրոպայում այնքան ջերմե-
ռանդ քարոզիչ, այնքան անձնուրաց նահատակ յառաջ բե-
րէ, Սպանիացւոց աղդի նման, որոնք մեծ յօժարութեամբ
զոհում էին իրանց կեանքը այն ճշմարտութիւնքը ծաւալելու
համար, որոնք իրանց խիստ պարտք էին համարում ծանօթա-
ցընել աշխարհին։ Ոչ մի տեղ կրօնական կարդերն այն աստի-
ճան երկարատեւ բարձր աղդեցութիւն չեն վարել, ոչ մի
տեղ ժողովուրդն, այնքան ջերմեռանդ, եկեղեցիքը այնքան
լիքը, եկեղեցականք այնքան բազմաթիւ չեն եղել։ Բայց
այս կրօնական զգայողութենէ, Սպանիացւոց անկեղծ ու մի-
ամիտ բնաւորութիւնը որ յատուկ է իրանց, ոչ թէ չափաւո-
րեցին կրօնական հալածանքին բռնութիւնը, այլ ընդհակա-
ռակն աւելի բորբոքեցին, թէ որ Սպանիացւոց աղդն այն-
քան ջերմ այնքան մոլի չլինէր, անշուշտ աւելի ներողամիտ
կը լինէր։ Կրօնապահպանութիւնն ամեն բանէ վերին համար-
ուեցաւ և ամեն բան նրա համար զոհուեցաւ։ Սուրբ եռանդն
մոլի եռանդ եղաւ և անգթութիւն ու անխղճութիւն յառաջ

բերաւ, և յետոյ խղճաքննութեան ատեան հաստատուելով որքան արիւն թափուեցաւ ամենուն յայտնի է։ Այս բարբարոսական օրինադրութեան հիմնադիրքը կեղծաւոր չէին, այլ մոլեվիտ։ Առհասարակ կեղծաւորներն այնքան անդութ չեն լինիլ, անդթութիւնն անզուսպ և վայրագ մի կիրք է, մինչդեռ կեղծաւորութիւնն անհամ մեղրի կը նմանի ու ինչպէս կամենաս այնպէս կը տրտրուի և մարդկային տկարութեան ներող կը լինի իր նպատակին հասնելու համար։ Սպանիայում ժողովրդի ուշադրութիւնը մի միայն մի բանի վրայ ամփոփուելով ամեն բան նրա հետ կապեց։ Հերետիկոսների դէմ ատելութիւնն էլ մի բնաւորութիւն լինելով իրանց, իբրեւ մի պարտականութիւն համարուեցաւ։ Խղճաքննութեան սաստիկ թշնամի պատմագրերը՝ որչափ որ կը պարսաւեն այդ բարբարոս ատեանը, այնչափ պարսաւում չեն խղճաքննիչների բարոյական կեանքը, ընդհակառակն նրանց մեծ մեծ գովեստներ են տալի իբրեւ թէ բարի մարդիկ լինէին։

Այս իրողութիւնքը, պատմութեան մէջէն անհամար ապացոյցներէն ամենափոքր վկայութիւնքն են։ Բայց սրանք մեզ ցոյց կը տան ու կը համոզեն, որ մի միայն բարոյական կեանքը չէ բաւական լուսաւորութիւնն իր կատարին հասցունողն՝ այլ մտաւորական կեանքն էլ է հարկաւոր, ինչպէս որ տեսանք մոլեկրօնութեան դէմ առնողն էլ դիտութիւնն է եղած [1]։

Կանգ կ'առնենք այս տեղ, ուրիշ անգամ էլ կը խօսինք մտաւորական յառաջադիմութեան պատերազմի վրայ արած ներգործութեան մասին։

[1] Գիւվիէ, Պատմաբանական Գովեստ։ Միլմէն, Պատմութիւն Քրիստոնէութեան։ Կիզօ, Պատմութիւն Լուսաւորութեան։ Ենինաէր, Պատմութիւն Եկեղեցւոյ։ Լօրանդ, Բանաքննական Պատմութիւն Սպանիոյ խղճաքննութեան։ Թօպէրտսն, Պատմութիւն Հինգերորդ Կարոլի։

ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆ

# ԱԶԳԱՅԻՆ

## ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ

## ՆԵՐՍԷՍ Ե.Ի ՄԱՀԷՆ ՄԻՆՉԵՒ ՄԱՏԹԷՈՍ Ա.ՆՈՑՆ ՄԱՀԸ

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

## ԱԶԳԱՅԻՆ ԱՐԴԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

1857 — 1866

(Շարունակութիւն. Տես Թիւ Բ. երես 95)։

Մի բան, որն որ շատ հարկաւոր էր դիտենալ մեր ազգին և զգոյշ կենալ դրա վատ հետեւանքէն, միշտ մեր տունը տեղը քանդելէ հին ժամանակներէ հետէ և քանդում է մինչև այսօր. մենք երբէք այդ բանը կարող չենք եղել նը-կատել և դեռ կարող էլ չենք լինում պաշտպանել մեզ դրա հարուածէն։ Այս բանի ծագումը մեր պատմութեան մէջ Քրիստոսէ յառաջ կսկսի, բայց իր վախճանը դեռ չէ հասել. կերեւայ որ այն ժամանակ մեր մէջէն պիտի վերանայ, երբ կատարելապէս իր պաշտօնը կը վերջացնէ, այսինքն մեզ աշխարհիս վրայէն, մեր անունովը, մեր եկեղեցիովը և մեր լեզուովն իսպառ կը չնչէ։

Ցոյց տանք այդ բանը մեր ազգայնոց և ծանօթացնենք իրանց նրա ազդեցութեանց հետ։

Հռովմայեցիք, այն ազգաց հետ, որ երկար ժամանակ կռուելով չէին կարող լինում յաղթել նրանց, մի ղէնք էին գործածում, այս ղէնքն էր բանսարկութիւն, երկպառակ-ութիւն, և դաւաճանութիւն։ Որ ազգի մէջ, որ իշխանու-թիւնն ամուր էր, այն իշխանութեան մէջ երկպառակու-թիւն, բաժանում դնել կը չանային, եղբայր եղբօրմէ, որդի հօրմէ ապստամբեցնելով և բաժանելով։ Որ ազգի մէջ էլ, որ իշխանութիւնն ու հպատակութիւնն ամուր միացած իրար

հետ իրանց դէմ պարիսպ էր լինում, հպատակներին էին զօրացնում և ապստամբեցնում այն իշխանութիւնը տկարացնելու համար. իսկ թէ որ ոչ. մինը և ոչ միւսը յաջողում չէր, դաւաճանութիւնն էր բան տեսնողը։ Ով որ մտադրութեամբ կարդացել է մեր նախնեաց պատմութիւնը նրա ամեն երեսի մէջ, մեր ասած բանին մի օրինակը կը տեսնէ։ Այս տեսակ ղէնքով են շատ անգամ յարձակել մեր վրայ մեր թշնամիք, մանաւանդ. յառաջ երկար ժամանակ կռուելէն ու յաղթել կարող չլինելէն յետոյ։ Սասանեանք և նրանցմէ յետոյ Սելճուքեանք այսպէս են վարուել մեզ հետ, բայց ամենէն աւելի և ամենէն դառն աղդեցութեամբ Հռովմ և Բիւզանդիոն են բանեցուցել մեզ դէմ այդ պիղծ ղէնքերը։

Այս յանկի ղէնքով մի ազգի, մի ժողովրդի վրայ տիրելու եղանակը ժառանդ ընկաւ Հռովմայեցւոյմէ պապական իշխանութեան, որն որ շատ յաջողութեամբ երեք և չորս դարէ հետէ Հայոց վրայ դործածեց ու դործէ ածում դեռ և վերջապէս մի կտոր բան բացուց մեզմէ և առաւ ու տարաւ։ Դրա օրինակին ամենայն մտերմութեամբ հետեւողն է այսօր Ռուսաց կառավարութիւնը, թէ ինչպէս և ի՞նչ կերպով ցոյց կը տանք հիմա այս տեղ յայտնի իրողական ապացոյցներով։ Պապականութիւնը շատ բան է սորվեցուցել աշխարհիս, ինչպէս ինքն էլ կը պարծենայ. բայց իր ամենամեծ սորվեցուցած բանն է եղել, տիրել աշխարհիս վրայ։ Աշխարհների և ազգերի վրայ տիրել մինչեւ այսօր այլ և այլ կերպով լինելը տեսել ենք, բայց ամենէն գլխաւորը և ամենէն ապահովն է տիրել բարոյապէս, այսինքն տիրել այն աշխարհի մարդկանց կամ ազգի, խելքին, մտքին, հոգւոյն և խղճին վրայ յառաջ և այսպէս տիրելուց յետոյ փոխել այն շատ հեշտութեամբ մարմնաւոր իշխանութեան։ Պապականութիւնն այդ առաջին պայմանը շատ լաւ պահեց ու կատարեց Թուրքիայում, ու պահում և կատարում է դեռ ևս մինչեւ այսօր այն տերութեանց համար մանաւանդ, որ իրան կամ խիստ քրիստոնեայ որդիք են կամ խիստ քաթոլիք։ Ցայտնի է, որ Օրթոտոքսն Ռուսիա դրանցմէ յետ մնալ չէր կամենալ։ Նա էլ, հէնց այս դարուս սկզբէն իրան պաշտպան Քրիստոսի Օրթոտոքս եկեղեցւոյ հռչակեց։ Այդ բանով դրաւեց ճնշուած քրիստոնէից հա-

մակրութիւնն իր վրայ, մանաւանդ անուսումն ու ագէտ եկեղեցականաց և ժողովրդականաց. Ռուսիա, այդ իր անելու շնորհին հետ միացուց նաև փող, վարձ, պաշտօն, նշան և այլն։ Մի ազգ, մի ժողովուրդ կամ մի հասարակութիւն իրար հետ կռուացնել, տկարին կուսակից լինել ընդդէմ զօրաւորին, կամ զօրաւորին ձեռքով տկարին նուաճել, այսօր քաղաքականութեան մի նպատակ է Ռուսական կառավարութեան ձեռին նոյն ազգի կամ հասարակութեան լուսաւորութեան դէմ մաքառելու։ Թէ որ մի ժողովրդի կամ հասարակութեան մէջ մի մասն է դատնուում, որու ձգտումը դէպի բարոյական կամ մտաւոր լուսաւորութեան դիմել է, նրա ձգտմանը դէմ առնելու և նրա զարգացման խափան լինելու համար, մի ուրիշ մասն նոյն հասարակութեան մէջէն վեր կը կացնէ, կամ քահանայից դասը, որն որ ինչպէս ուզենայ այնպէս կարող է շարժել տալ, կամ աղնուականաց դասը, ընդդէմ արհեստաւորաց կամ քաղաքացւոց, մի խօսքով այնքան մարդկանց կարգ կայ, որ, որու շարժումն, որ իր նպատակին դէմ է, միւսի շարժումն նրա դէմ կը վերկացնէ, և կը տեսնես երկու կարգ մարդիկ նոյն քաղաքի մէջ նոյն ժողովրդէն, կամ հասարակութենէն իրար հետ կռուում, իրարու վզէն բռնել, իրար սպաննելու, հալածելու և փչացնելու են վեր կացել, այն աստիճան, որ բանն իր ականջին կը հասնի իբրեւ թէ և ինքը դատաւոր, խաղաղարար կը կանգնի սրանց երկուսին մէջ տեղ և իբրեւ թէ մէկին և միւսին իրաւունքը կը պաշտպանի. այնքան երկար կը տեւէ իր դատաւորութիւնն որ այն կողմին, որու ինքն տակէ տակ օգնել է և դրդել յաղթանակը կը տանի, միւսը կը զզուի այն ազգէն կամ հասարակութենէն, դուրս կը դայ և կրօնափոխ լինի։ Ա. յսպէսով միւս օրինաւոր մասն էլ յաջորդ սերնդին առջեւ կը բամբասուի, իր բռնած ընթացքն անխոհեմ և կարճատեւ կը համարուի և իրան ոչ հետեւող, ոչ յարգող և ոչ օգնող կունենայ, մինչեւ առանձին մնալով կը յուսահատի և իր ձեռնարկութեան տակովն կընկճի կը կործանի։ Ահա, այսպիսի զէնքերով մեր ազգի և եկեղեցւոյ թշնամիք մեզ հետ կռուել ու կռուում են, մեզ խփել ու խփում են, մեզ փչացուցել ու փչացնում են, իրանք թագուն կենալով իրանց արձակած

նեռերի քամակն և ընդհակառակն մեզ բարեկամ ցոյց տալով իրանց մեզ սիրելով են կծում, շոյելով են խածնում։ Այո՝ ուշիմ ընթերցող, մեր ազգի և եկեղեցւոյ երկու զօրաւոր թշնամիքն էլ, Պապականութիւնն ու Ռուսականութիւնը իրանք իրանց թագուն պահելով իրանց պարսպի տակին այսինքն կարծուած պաշտպանողութեան, մեր սիրելի եղբարց, մեր պատուական հարց, մեր հայրենեաց իշխանաց մի խօսքով մեր ամենէն սիրական ազգ այնոց ձեռքով են մեր տունը տեղը քանդում, մեզ փչացնում և մեր աւարովն ու կողոպուտովն իրանց տունը շինում, իրանց անունը մեծացնում։ Այս մեր ասմունքին, ապացոյց, բաց արա, այս վերջին ժամանակուայ տարեգրերը, լաւ քննողական աչքով կարդա՛, կը տեսնես քանի անգամ կոդանդնուպօլսոյ Պատրիարքութեան պատմութեան մէջ այդ իրողութիւնը կրկնուել է և կրկնուում է մինչեւ այսօր. մի առ մի յիշելն այս տեղ տասնուեօթներորդ դարէն սկսած, ազգային կռիւները իրանց պատճառներովը երկար կը լինի. բայց Հայ պատմագետին յայտնի են այդ իրողութիւնքը։ Հէնց այդ իրողութեանց նը-մանէ նաև Օրթագիւղի քարոզիչ Մատթէոսի կաթողիկոսութիւնը մեր ազգի մէջ։ Մեր ողբմելի և միամիտ եկեղեցական բարձր պաշտօնեայք, նոյնպէս և մի քանի ազգ, եկեղեցի և ժողովրդային կամ ազգային իրաւունք չճանաչող և ոտնակոխ անող իշխանաւորներ, դիտութեամբ կամ անգիտութեամբ գործի և խաղալիք եղած Ռուսական քաղաքականութեան ձեռին, ինչպէս Պոլիս նոյնպէս Թիֆլիզ և ուրիշ հայաբնակ քաղաքներ, իրանց քամակն էլ ունենալով մի շատ անուսումն ու աննշան և դատարկ մարդիկ էլ, որ իրանց հայ և ջուր ճարելու համար մէջ տեղ պիտի ընկնին ծառայելու այնպիսի մի մեքենայի, որնոր թէպէտ իրանք են դարձնող՝ բայց չեն դիտում թէ ի՞նչ բան շինելու համար է որ այդ մեքենային գործին են եղել իրանք. Պապականութիւնն ու Ռուսականութիւնը այդ յանկի մարդկանց ձեռքով է, որ մեր մէջ շատ գործ են տեսել և տեսնում մինչեւ այսօր. դժբաղդութեամբ այս տեսակ մարդկանց մէջ, աշխարհականացմէ, եկեղեցականացմէ և ուսումնականացմէ էլ են գտնուել։

Օրթագիւղի քարոզիչ Մաթէոս եպիսկոպոսը՝, Պուրսայու և Զմիւռնիոյ առաջնորդ լինելէն յետոյ, 1844 թուին Կոս-դանդնուպոլսոյ Պատրիարք եղաւ։ Այս բարձր պաշտօնին հասաւ թէ չէ, ինքն իրան համոզեց թէ մին օր էլ կարող է և ամենայն Հայոց Կաթողիկոս լինել. ուստի իր միակ ուշադրութիւնն էլ դէպի այդ նպատակ դարձուց. իր ժամանակուայ ազգային հանդամանքները, իրեն պաշտպանող նշանաւոր մարդկանց օգնականութիւնը, և ամենէն աւելի իր ցոյց տուած հաւատարմութիւնը Ռուսաց կառավարութեան օգնեցին իրան իր նպատակին հասնիլ մի այնպիսի ժամանակ՝ որ Հայոց ազգի ընդհանրութեան ազդեցութիւնն ոչինչ էր իր ազգային վարչութեան վրայ։ Դա Պատրիարք լինումէ թէ չէ՝ Ներսէս Կաթողիկոսին մի թուղթ է գրում, որուն մէջ խընդրումէ առանձինն թէ երկու տէրութեանց մէջ, այսինքն Օսմանցւոց և Ռուսաց մէջ եղած բարեկամական յարաբերութեանց ժամանակ, ինքը համարձակումէ խնդրել Օսմանեան կառավարութենէն, որ հրաման լինի իրան, Ցաճկաստանի Հայոց ամեն եկեղեցեաց մէջ ամենայն Հայոց Կաթողիկոսի անունը յիշատակել տալ, որ ինչպէս յայտնի է, 1826 թուի Ռուսաց և Օսմանցւոց պատերազմէն հետէ դադարուել էր յիշուելուց։ Բարձրագոյն դուռն առանց առարկութեան և դժուարութեան ընդունումէ Մատթէոսի խնդիրքը և հրաման է տալի դրա կատարմանը։ Անմիջապէս Մատթէոս՝ կոնդակներ է ուղարկում Թուրքիոյ Հայոց եկեղեցեաց և ինքն էլ անձնուվին վեր է կենում մի ատենաբանութիւն է անում Պոլսոյ Մայր եկեղեցիումը այս բանիս համար և ահա այս կերպով իր արդէն ունեցած ժողովրդականութեանը վրայ աւելացնում է և մի նոր նշանակութիւն, ոչ միայն Հայոց ազգի առջեւ այլ և Ռուսաց այն ժամանակուայ դեսպան Թիթովին, Ռուսիոյ նշանաւոր Հայոց և մանաւանդ Ներսէս Կաթողիկոսի առջեւ։ Այս իրողութիւնն է լինում առաջին առիթ, որով Մատթէոս Ռուսաց կառավարութեան ծանօթանալով՝ ընծայումէ իրան դրեթէ դլխաւոր գործի նրա ազդեցութեան Թուրքիայում, ինչպէս որ պիտի տեսնենք մի փոքր յետոյ[1]։

[1] Այս տեղեկութիւնքը մենք լսել ենք բուն իսկ Հանգուցեալն բերնէն, որ ինչպէս ուրիշներին նոյնպէս և մեզ շատ անգամ պատմած է, նմանապէս և իր մեկ

Այս իրողութեան վրայ մի տարի հաղիւ անց է կենում թէ չէ, Նիկողայոս կայսեր երկրորդ որդին Կոստանդին աւագ իշխանը ճանապարհորդութիւն է անում դէպի Թուրքիա. մի նոր առիթ ներկայանում է նորէն Մատթէոսին իր յարաբերութիւնը Ռուսաց Տէրութեան հետ նորանոր ծանօթութեամբ աւելացնելու և ամրացնելու։ Կոստանդնուպոլսոյ Ռուսաց դեսպան Թիմոֆէ առանձին յանձնարարութիւն է անում Մատթէոսի համար կայսերորդուն իբրեւ Ռուսաց ամենողորմած և ամենաբարեպաշտ կայսեր հաւատարիմ անձն և իբրեւ խիստ մեծ նշանակութիւն ունեցող իր ժողովրդեան մէջ։ Ռուսաց մեծամեծը այսպիսի տեսութեանցմէ և ծանօթութեանցմէ, շատ լաւ շահուիլ գիտեն, այսինքն փոքրիկ իշխանութիւնը իրանց շահուն ծառայեցնել նրանց փոքրիկ իշխանութեան փառասիրութիւնը շոյելով և յարգելով։ Մատթէսան էլ իր կողմէն կարող էր մեծ յոյսեր ունենալ այնպիսի բարձր անձանց բարեկամութենէն։ Ուստի երկու կողմէն էլ հարկաւորութիւն կար իրարու հետ մի տեսակ բարեկամական յարաբերութիւն պահել, որն որ մէկին քաղաքականութեան էր շահաւէտ, միւսին էլ փառասիրութեան էր հարկաւոր։ Ուստի Ռուսաց դեսպանատունն այդ բարեկամութիւնը շարունակ և հաստատուն պահելու համար երկար ժամանակ մանր մունր մարդկանց ձեռքով ինչպէս իրանց սովորական է, պահպանեց։

Մի փոքր ժամանակ յետոյ Կոստանդին աւագ իշխանը, գնում է Պոլսէն և Պուրսա և այն տեղ Հայոց ժողովրդէն և առաջնորդէն այնպիսի մի մեծ ընդունելութիւն է գտնում, ասում են, մինչեւ այսօր ականատեսները թէ ոչ մի տեղ Թուրքիայումն այսպէս չեն տեսել. Պուրսայու Հայոց եկեղեցւոյ բոլոր ուխտը, Հայոց իշխանաւոր անձինք երդեցողների մի դաս

գրած թղթումն էլ ունինք կարդացած առ Աղէքսանդր կայսեր ամենայն Ռուսաց իր դէպի նրակայսրութիւն ունեցած հաւատարմութեան մասին իր Պատրիարքութեան ժամանակ։ Բայց կան ոմանք էլ, որ ասում են թէ Մատթէոս այդ առաջարկութիւնն առ Ներսէս Կաթողիկոս ինքնիրմէ չէ արած, այլ ուրիշ անձանց թելադրութեամբ, այս բանս ասողներ մեզ եղել են և դեռ այսօր էլ կենդանի են։ Իսկ թէ ո՞վ է ճշմարիտ, Մատթէոսին մտէն ճանաչողները կարող են գիտենալ, մենք այսքան գիտենք որ այս իրողութիւնը Մատթէոսի Պատրիարքութեան հենց առաջին տարին եղաւ։

ամենքը միասին թափօր կազմելով դիմաւորել են կայսերազ-
նին և եկեղեցին են տարել (իբրեւ թէ մի կաթողիկոս լինէր)
առաջնորդն, որ էր Գէորգ Ծայրագոյն վարդապետը իր ամեն
քրիստոնէական մեծարանքն ու յարգանքը ցոյց է տալի իբրեւ
պաշտպան քրիստոնէից և նրա Օրթոտոքս եկեղեցւոյ հռչա-
կող կայսերորդւոյն և իրաւի, առաջնորդի ցոյց տուած յարգ
ու պատիւը թէ գործով և թէ խօսքով այնքան չափն անց է
կենում, ասում են, որ մի տեսակ հպատակութեան կերպա-
րանք է ստանում և իր նշանակութիւնը փոխում է. ասումեն
թէ Կոստանդին յիրաւի դրաւուել է Պուրսայու Հայոց և նրանց
առաջնորդէն վստահ լինելով նրանց անկեղծութեան վրայ,
հէնց դնում է թէ չէ Ռուսաստան, ամեն Հայ մեծամեծ
պաշտօնատէրների և իշխանաւորների մօտ մեծ գովեստով է
խօսում Գէորգի վրայ և ասում է թէ՝ ի՞նչպէս Ներսէսն այդ-
պէս վարդապետներին եպիսկոպոս չձեռնադրել։ Հերիք էր,
որ Ռուսաց մեծ դուքը իր կամքն այսքան յայտներ, կը նը-
շանակէր հրամայում եմ, որ նա եպիսկոպոս ձեռնադրուի.
Սրա վրայ, կարճ ժամանակէ յետոյ Գէորգ վարդապետը
Թիֆլիզէ դասանում, երբ արդէն Ներսէսն Կոստանդինի
Թուրքիայումն ստացած ընդունելութեան համբաւն առած է
լինում և լսած նաև թէ, Գէորգ վարդապետ Պուրսայու ա-
ռաջնորդին խիստ հաւանել է. Ներսիսին բաւական էր այս-
քան Գէորգ վարդապետին ճանաչելու համար. բայց դեռ
իր և կառավարութեան մէջ սառնութիւն սկսած չլինե-
լով յայտնի կերպով, ձայն ծպտուն չի հանում։ Գէորգն իր
արիստոկրատական (իշխանաւորական) կերպերովն իր արտա-
քին տեսքովը, տարակոյս չկար, որ շուք պիտի անէր Թիֆլի-
զու այն ժամանակուայ, այդ ձև Հայ արիստոկրատների մօտ։
Դժբաղդութեամբ Գէորգ վարդապետն հէնց միայն այդ
իշխանաւոր մարդկանց ծանօթութիւնը ստանալու և դրանցմէ
ծանօթանալու է լինում հետամուտ, մոռանալով կամ թէ բանի
տեղ չդնելով դէնը մնացած հասարակ ժողովուրդը, որու մէջ
արդէն, Աստուած Հայոց ազգի և Եկեղեցւոյ համար մարդիկ
ծնեցուցել էր։ Ներսէս անուղղակի կերպով հրամայուած
Ռուսաց կառավարութենէն և ուղղակի կերպով Թիֆլիզու
Հայոց իշխանաւորներէն, և էլ աւելի Գէորգ վարդապետի

վրայ տեսած քաղաքավարական շնորհքներէն հաւանելով, ամեն տեսակ հայրապետական հիւրընկալութիւն ցոյց տալուց յետոյ եպիսկոպոս է ձեռնադրում նրան Պուրսայու վիճակին վրայ։ Աստղներ կան, այնքան հաւանուել ու սիրուել է Գէորգ, որ շատ խնդրուել է Ռուսա Հայոց մէջ մնալ, խընդրողներէն մէկն էլ է եղել ինքն Ներսէս, բայց Գէորգ եպիսկոպոս յանձն չէ արել և շտապել է իր վիճակը վերադառնալ։ Մենք էլ կասենք թէ յիրաւի Ներսէս Գէորգին իրան մօտ պահել ցանկացել է, յայտնի է մեղ ինչ նպատակով է եղել։ Բայց թէ Գէորգ մնալու լինէր Թիֆլիզ կամ Էջմիածին Ռուսաց կառավարութեան առջեւ իր ամեն ծանրակշիռ նըշանակութիւնը և հարկաւորութիւնը կը կորցուներ։

Մատթէոսը, Գէորգի այսպէս ծանօթ լինելն ու պատիւ տեսնելը Ռուսաց տէրութենէն անշուշտ լաւ աչքով չէր նըկատել և կը կասկածէր 'ի հարկէ որ չը լինի թէ նա՝ իր շուքը խաւարեցնէ Ռուսաց առջեւ։ Շատերը կասեն, որ այս ժամանակէն յառաջ այս երկու եկեղեցականաց մէջ մի իրար ատելութիւն եղած լինի. բայց մենք կասենք, որ հէնց այս ժամանակէն է սկսած մի տեսակ հակառակորդական մրցողութիւն այս երկու եպիսկոպոսների մէջ նշանակութիւն ըստանալու Ռուսաց տէրութենէն։ Այս մրցողութեան ժամանակն է, որ Մատթէոս բոլորովին Ռուսաց դեսպանին դէրկը կընկնի և դրեթէ նրա համար և նրա ուղածին պէս Պատրիարքութիւն կը վարէ։ Այս այն ժամանակն է, երբ Ռուսաց տէրութեան ազդեցութիւնը Թուրքիայի մէջ վերջին ծայր հասել ահագին դղրդոց հանելով թմբուկ էր ածում և Անդղիա էլ ամեն ջանք էր անում այդ ազդեցութեան ձայնը կտրելու և այդ թմբուկը տրաքեցնելու։ Մատթէոսի Պատրիարքութենէ յառաջ մի խնդիր էր ծագել Արեւելք. այս խնդիրն էր բրօթէսթանդութեան տարածուիլը Հայոց մէջ։ Բրօթէսթանդութիւնը, մէկ հայոց պապականութենէ թեւադրուած, մէկ էլ, իրանց ոգէտ ու անմիտ վերանորոգութենէն պատճառուած հալածուեցան մեր Պատրիարքական վարչութենէն։ Անդղիական դեսպանութիւնը դիտենալով այդ բանը որ տեղէ է շարժում, սկսաւ վերանորոգուածներին պաշտպանել իբրեւ Անդղիոյ դաւանակից և 'ի հարկէ պէտք էր որ պաշտ-

պանէր, քանի որ Ֆրանսիա պապականներին, Ռուսաստանն էլ Յունաց և Հայոց եկեղեցեաց պաշտպան էր հանդիսանում։ Այդ հալածանքը քանի դնաց դրդռեցաւ Ռուսաց դեսպանութենէն, այնպէս որ երկու մեծամեծ պատրիարքութիւն Յունացը և Հայոցն իր ձեռին ունենալով Անգլիոյ դեսպանի քը-թին ուղածին պէս տալիս էր, մէկ կողմէն Յունաց ձեռքով պրոթէսթանդներին հալածելով, միւս կողմէն Հայոց ձեռքով, որոնք էլ ամենայն հաւատարմութեամբ, կարծելով թէ իրանց եկեղեցեաց ծառայութիւն են անում, սկսան հալածելու հա-լածել նրանց, այնպէս որ սաստկանալով հալածումը բանը մինչեւ Բարձրագոյն դուռը հասաւ, Անգլիական դեսպանու-թիւնն էլ յայտնի պաշտպան կեցաւ նրանց և հրահանգ ու-ղարկեց Թուրքիոյ ամեն հիւպատոսներին յայտնի պաշտպա-նել ազատական քրիստոնեայքը, ընդդէմ Ռուսական մեքե-նայութեան, որ դրեթէ արեւելքի ամեն քաղաքների մէջ դրդռում էր իր գործակալների ձեռքով շարժուել ընդդէմ պրոթէսթանդների։ Մատթէոսն Ռուսաց դեսպանատան մանր մունր պաշտօնակատարների և մանաւանդ Ռուսասէր Հայոցմէ թելադրուած վեր կացաւ մինչեւ անդամ Անգլիոյ դեսպան Լորտ Բանիկին հետ հանդէս դուրս եկաւ երես առ երես կռուեցաւ կրօնական խնդիրների վրայ։ բայց յաղթեց ու իր խօսքը տեղն եկաւ, ամենեւին ո՛չ, այլ այն հետեւանքն ա-ռաջ եկաւ, որ Պօլսոյ Հայոց մեծամեծները երկուսի բաժան-ուեցան, ոմանք պաշտպան դուրս եկան Մատթէոսին և ո-մանք հակառակ։ Նրանք, որ պաշտպան էին դուրս եկել՝ հէնց այս ժամանակէն ԹԱԻԱՐԵԱԼ անունքով որոշուեցան։ իսկ նրանք որ հակառակ էին՝ իրանք իրանց ԼՈՒՍԱՒՈՐԵԱԼ անուա-նեցին։ Այս երկու կուսակցութեանց մէջ այս կերպով հակա-ռակութիւնը մի անդամ արմատ ձգելով քանի դնաց հաս-տատուեցաւ և տարածուեցաւ։ Մինչեւ այս ժամանակ մեր ազգայնոց մէջ եղած կռիւները ստորերկեայ ճանապարհով չէին, սանդարամետական հնարքներ գործածելն անծանօթ էր։ իսկ քսփուսութիւնը և բանսարկութիւնը դեռ ևս իբ-րեւ հանճարի ճոխութիւն և շնայլութիւն չէր ճանաչուել այլ իբրեւ դիւական մեղք։ Այս ժամանակէն հէնց կարծես, այս միջոցներն եղան մէկին և միւսին ձեռին իրաւունք կռուե-

լու և իրար կործանելու։ Լուսաւորելոյ կողմն այն ժամանակ մի ծանրակշիռ անձն կար, ոչ թէ իբրեւ լուսաւորեալ երեւելի՝ այլ լուսաւորելոյ մեծ մասը նրա պաշտպանութեան էին կարօտ, ինչպէս ինքն էլ նրանց ծառայութեանը։ Սա հէնց իր դրութեամբ՝ հերիք էր, որ Անգլիական դեսպանին ակնարկութիւնը նշմարէր Մատթէոս Պատրիարքին կործանելու համար։ Շատ չանց կացաւ մեծ աղմուկ վեր կացաւ, Հայոց ժողովրդին ամբոխն Պատրիարքարան դնաց, պօռաց, պօռպռռաց մեծ աղմուկ յարուցանելով, «Էն» «ՈՒՂԻ» Մատթէոսին ասաց, Մատթէոսն էլ ստիպուեցաւ փախչիլ ու գնաց իր պաշտպանողների դիրքն ընկաւ։ Հասկացուեցաւ իրողութիւնը, խնդրին հանգուցը լուծուեցաւ, պապականութեան պաշտպան աղդայինք, հանդէս էին դուրս եկել անշուշտ անդիտութեամբ Ռուսականութեան դործի լինելու։ Այս բաներն այն ժամանակ են կամ փոքր ինչ յառաջ երբ հիմակուայ Պիոս Թ. դահն բարձրանալով ղրկումէ կոսդանդնուպօլիս մի նուիրակ իր կոնդակովն ՄՕՆՍԻՆՅՈՐ ՖԷՐՐԻԷՐԻ անուն Յոյնքը և Հայքը Ս. Պետրոսի փարախը հրաւիրելու։ Այդ անձի ընդունելութեանը, Հռովմայ հետ բարեկամութիւն հաստատելու շարժման դլուխն էր նոյնպէս և այն ժամանակ, այսօրուայ Ռուսականութեան պաշտպան հանդիսացող Պոլսոյ Հայոցմէ ոմանք։

Երբոր Մատթէոս, այսպէս քիչ ժամանակուայ մէջ բարձրանալով, նոյնպէս քիչ ժամանակումն էլ ցածրացաւ՝ դնաց նորէն Օրթագիւղիր հին պաշտօնը վարելու, այնէ քարոզչութեան, որու մէջ արդէն մեծ համբաւ էր ստացել իբրեւ երեւելի, բայց այդ քարոզչական համբաւը խիստ ժողովրդական համարելով և կամայ կամայ մուռացականութեան մէջ ընկնելով, նոր ճար, նոր հնար մտածեց ու կամեցաւ դրականական հանդէսումն էլ համբաւ ստանալ։ Ուստի ձեռք զարկաւ իր ժամանակուայ ազէաներն ու անմիտները զարմացնող դրքեր հրատարակել իր ժամանակուայ պատուելիների օդնականութեամբ, իբրեւ թէ Հայաստանեայց Եկեղեցին է պաշտպանում պապական և բողոքական հայոց դէմ. միւս կողմէն էլ թղթակցութիւն բաց անել Ռուսիոյ Հայոցմէ նշանաւոր եկեղեցականների և աշխարհականների հետ։ Մատթէոսի դրականական դործերի վրայ աւելորդ կը համարինք մեր հայեց-

ուած.քը դարձուներ, վասն զի այսօրուայ կարդացողներին շատ լաւ յայտնի է դրանց արժանաւորութիւնը։ Այլ այսքան կասենք՝ որ նրանք արժանաւորութիւն ունենալու համար աշխատասիրուած չեն, այլ մի նպատակի ծառայելու համար, Հայաստանեայց Եկեղեցին իր թշնամիներէն ազատելու համար չեն, այլ միմիայն ասուելու համար, որ Մատթէոսը պապականների և բողոքականների դէմ դրքեր շինեց, հրատարակեց։ Իսկ իր թղթակցութեանց նպատակն է լինում Սալանթեանցէն խնդրել միջնորդ և բարեխօս լինելու Ներսէսի և հարկաւոր եղած անձանց մօտ թիֆլիզու առաջնորդ նշանակուելու։ Ներսէս Կաթողիկոսէն էլ Մոսկուայի Հայոց քարոզիչ լինելու և ուրիշ սրանց նման իրարանմանութիւնք, որոնք շատ չի անց կենում յայտնուում են թէ Սալանթեանցին և թէ Ներսէսին։ Սա մի և նոյն ժամանակ լսում է Մատթէոսի Ռուսաց դեսպանին հետ բարեկամանալով Անգլիացւոց դեսպանին հետ մաքառիլը և դրա թելադրութեամբ՝ սրա հետ յայտնի համարձակ անքաղաքավարութեամբ վարուելը, կրօնական հալածմունք յարուցանելը ազգայնոց դէմ և մի և նոյն միջոցին պապականների հետ յարաբերութիւն ունենալը, ուրիշի խելքով դրուած և իր ձեռքով ստորագրուած դրքերը և այլ շատ բաներ։ բայց ամենէն մեծն և Ներսէսի ականջին խիստ վատ հնչողն է լինում, Միսար Ցուայտի մի դիրքը, որն որ հրատարակուած է լինում Թուրքիոյ կամ Արեւելեան քրիստոնէից վրայ։ Միսար Ցուայտ այդ դրքումը, Մատթէոսի շատ կենդանի և ճշմարիտ դուներով ներկում է, այդ դրուած.քը թարգմանել է տալի Ներսէսն և իր մօտն է պահում, ինչպէս մենք էլ մեր աչքովն ենք տեսել։ այն ժամանակուայ հանգամանքների հետ համեմատելով Միսար Ցուայտի դրուած.քը Ներսէս՝ շատ ճիշտ նկարագրուած է դտնում և անմիջապէս Սալանթեանին Մատթէոսի մասին մի նամակ է գրում իր ցաւն յայտնելով՝ թէ մեծ մեծ յոյսեր ունեցած մի եկեղեցական ինչպէս փոքրիկ և դաձուձ անձն է դուրս գալի, ողբալով Պոլսեցւոց այս դատարկ վիճակի և իրանց մարդախաբ կերպերի վրայ։ Սալանթեանցն էլ երեւում էր, որ այդ էր սպասում, իսկոյն վեր է կենում մի երկար նամակ է գրում Մատթէոսի թէ պատրիարքութեան և թէ քարոզչու-

թեան ժամանակ արածները մանրամասն պատմելով և բոլորովին դուրս է բերում աւելի վտանգաւոր անձն Հայաստանեայց Եկեղեցւոյն քան թէ օգտակար։ Մենք էլ ենք կարդացել այդ Սալլանթեանցի նամակը Էջմիածին Ներսիսի թղթերի մէջ, երբ ինքն Մատթէոսը Էջմիածին հասած օրը, դիտենալով այդպիսի թղթերի գոյութիւնը, իսկոյն վերհարան մըտաւ թէ չէ՝ հրամայեց հէնց առաջին օրը իր Էջմիածին մըտնելու, Ներսիսի բոլոր թղթերը կրակի տալ . . . . . .։

Սրանք են, ահա՛, ո՞վ ողջամիտ ազգային, մեր ունեցած ստոյգ տեղեկութիւնքը Մատթէոսի և Գէորգի Ռուսաց հետ ունեցած յարաբերութեանցը մասին. կարող էինք շատ երկար ու բարակ վկայութիւնք յառաջ բերել, բայց ընթերցողն դրանց մեր յիշատակարանի ընթացքի մէջ շատ անգամ պիտի պատահի։ Կարելի է շատերին այդ յարաբերութիւնքը շատ չնչին և առանց նշանակութեան բաներ երեւան և ասեն թէ՝ քաղաքականութիւն են, բարեկամութիւն են ևայլն ևայլն։ Բայց այդպիսի բաների ծանրութիւնը և թեթեւութիւնը իրանցմէ յառաջ եկած հետեւանքէն կը կշռուի և կը դատուի։ Մատթէոսի բռնած քաղաքականութեան նպատակն ու հետեւանքն ինչ լինելը հաստատելու համար փաստ և ապացոյց հարկաւոր չէ և մենք, համարձակում ենք ասել, ոչ մէկէն չենք սպասել որ մեկնէ մեզ այդ, դրա կեանքը ամեն ծածուկ յայտնեց մեր աչքին. դրա կաթողիկոսութիւնն այն օգուտը բերաւ Հայոց ազգին, թէ որ օգուտ կարելի է ասել. որն որ ինքը ամենեւին իր մտքէն չէր անցնում, թէ ինչ օգուտ է այդ դեռ մարմին չէ առել որ ասենք, երբ մարմին կառնու և մենք էլ իրօրէն կզդանք կը շոշափենք այն՝ այն ժամանակ մատնացոյց կանենք, իսկ թէ ոչ Մատթէոսի կաթողիկոսութիւնն ամեն կողմէն վտանգաւոր եղաւ եկեղեցւոյն և ազգին քան թէ օգտակար։ Գէորգինն էլ նոյնպէս յայտնուեցաւ Ներսէսէն յետոյ կաթողիկոսական ընտրութեան մէջ, ինչպէս պիտի տեսնենք մի փոքր՝ յետոյ։ Ահա՛ ի՞նչ նշանակութիւն ունէին այդ յարաբերութիւնքը, թէ Մատթէոսը և թէ Գէորգը երբէք չեն կարող հաստատել, որ իրանց՝ և իրանցով Հայոց Ժողովրդեան Ռուսական կառավարութեան հաւատարիմ անելը՝ ազգի օգտի համար լինի, նորէ՛ն կասենք

չեշտելով՝ թէ աղդի օդուտը, որ մի քանի կարճատես և փա-
ռասէր եկեղեցականք իրանց անձի օդուտ հետ միացնելով օ-
տար աղդերէն օդուտ են մուրանում, ամենեւին օրինաւոր
չէ, այդ աղդին օդուտը չէ, այլ իրանցը. աղդի օդուտն է
տալ նրան բարոյական և մտաւոր դաստիարակութիւն. և
այս քաջ ու արի եպիսկոպոսների առաջին ու դլխաւոր
պարտքն է. Գէորգ, Մատթէոս, Գաբրիէլ, Սարդիս և ուրիշ
որ տեղ որ կան սրանց նմանն եկեղեցականք իրանց անձին
օդտին մէջն են վնասել աղդին օդուտը. իրանց անձի օդուտը
թագցնելով, ասում են՝ աղդի օդտի տակ, վեր են կացել
մեզ առաջնորդելու դէպի ճշմարիտ լուսաւորութիւն, այ
քեզ կեղծաւոր ու խաբեբաներ, իրանք խաբուել են հերիք
չէ ուզել են և ուզում են որ մենք էլ՝ Հայոց աղդի սերունդը
ապագայն էլ խաբուի, իրանք կեղծել են իրանց օդտի համար,
պահանջում են այսօր և մենք կեղծենք մեր ինասուն համար
և լուռ կենանք, տարօրինակ խոհեմութիւն. ահա այս փասան
են մեր առաջը դնում մեր ամենէն լուսաւոր կարծուած ե-
կեղեցականներն այսօր։ Ինչպէս Եկեղեցւոյ իշխանների մի-
ջում, ցաւալին է որ նոյնպէս և աղդի իշխանների մէջն էլ
նոյն ձգտումն է երեւում, ինչպէս Պոլիս, նոյնպէս էլ Թիֆ-
լիզ և ուրիշ տեղուանք. ուշիմ ընթերցող այս մեր ասածների
ակներեւ ճշմարտութիւնքը կը տեսնես, երբ մենք մեր նիւթին
աւարտման կը հասնինք։

Ինչպէս, ասել ենք սկզբումը, երբ Էջմիածնի միաբանու-
թիւնն առանձին թղթով յայտնում է իր դիտաւորութիւնը
Պոլսոյ Պատրիարքարանին, թէ այս անգամ կաթողիկոսի ընտ-
րութիւնը թուրքիոյ արքեպիսկոպոսներէն պէտք է որ լինի։
Այն ժամանակուայ Պոլսոյ Պատրիարքն ու աղդային վարչու-
թեան դլուխ եղողները սկսում են, առանց բանը ժողովրդա-
կան անելու, իրանց մէջ թագուն խորհուրդներ անել և մի
կերպով Ռուսաց կառավարութեան հաճելի անօրէնութիւնք
անելու պատրաստուիլ։ Նոյնպէս Բէթրբուրգի դահլիճն էլ Եւ-
րոպիան զարմացնելու համար մեծ մեծ խաղեր խաղալու է
պատրաստուում Արեւելքումը։ Այլազգեան Գաբրիէլ վարդա-
պետին փարիզէն փոխադրում է Ռուսիա, Թիֆլիսի խորհրդ-
ովը արդէն Մատթէոսին կաթողիկոսութեան համար ընտրե-

լինելի ցանկումէ դնուում, ինչպէս նաև Կոստանդինի կամ՝ քովն էլ Գէորգին, որուն պատրաստում են Պօլսոյ Պատրիարք անելու, մի և նոյն ժամանակ Թիֆլիզու առաջնորդութեան մէջ հաստատումէ Սարգիս Ջալալեանցը, Գէորգ վեհապետեան, այն հոգւով մարմնով Ռուսաց կառավարութեան մարդն Ղարապաղու առաջնորդ, որ այսօր էլ Ռուսաց կայսեր հրամանով տեղապահ է ամենայն Հայոց Կաթողիկոսութեան. իսկ Մատթէոսն, այս այն Մատթէոսն է, որ ընդդէմ Ներսիսի հրամանի պսակեց Լաղարեանց իշխաններին մի դուստր իրանց քեռորդւոյն վրայ, անընդհատ կռուեցաւ Լաղարեանց հետ միասին քամակը տալով տէրութեան ամենայն Հայոց կաթողիկոս Ներսիսի հետ, Աժտերլոանու առաջնորդ է նշանակուում։ Բայց այդ պարագայում Մատթէոսի համբաւը քընողութեան տակն է ընկնում, Գաբրիէլ իր եղբօրը ձեռքով դրա ընտրելի նշանակուելու մասին արդէլք է լինում ու նրա կատողութիւն է անում իբրեւ կասկածաւոր անձն և պապականութեան բարեկամ, այնպէս որ յարմարուելով այն միջոցների Պօլսոյ մէջ անցկացած հանդամանքներին և Մատթէոսի արարմունքներին իր առաջուայ նշանակութիւնը կորցնում է Ռուսաց կառավարութեան առջև, որ դրամէն օգուտ քաղելու յոյսէն ձեռը վեր առնելով իր աչքը դնումէ Պուրսայու Առաջնորդ Գէորգ եպիսկոսին վրայ։

Այլ և այլ թղթակցութիւնք, այլ և այլ անձանց հետ շարունակումեն Մատթէոսի և Գէորգի կողմէն Ռուսիոյ Հայոց վրայ, այս թղթերէն Թիֆլիզ ստացողները ժողովրդեան մէջ սրա և նրա կարդումեն և արդէն յայտնի երեւան է լինում թէ որո՞նք են հետամուտ կաթողիկոսական դահին։ Այս միջոցին Էջմիածնի Սինոդը տէրութեան հրամանով թէ Թուրքիոյ և թէ Ռուսիոյ ամեն վիճակներին թղթեր է ղրկում, որպէս զի իրանց պատգամաւորները պատրաստելով Էջմիածին ուղարկեն սահմանուած ժամանակին։ Այս թղթերէն մինն էլ Պօլիս Յակոբոս Պատրիարքին է ղրկում. Յակոբոս իր մօտն է կանչում իր ժամանակուայ աղդին վարչութիւնն իրանց ձեռին ունեցող մի քանի անձինքը։ Սինոդէն եկած թուղթը նրանց ցոյց է տալի, և առումէ նրանց, արէ՛ք ինչ որ հարկն է. բայց այդ անձինքը, որոնց հետ միասին և Յակոբոս Պատրիարքը

փոխանակ 1836 թուի Բալաֆենդայի (կարգադրութեան) կամ թէ մեր Եկեղեցւոյ նախնական աւանդութեան և սովորութեան համաձայն վարուելու և ընդդէմ ընդհանուր ազգի անցած, ներկայ և ապառնի իրաւունքին, ոչ Պոլսոյ Եկեղեցեաց մէջ ծանուցում են անում ոչ դաւառների Հայոց ժողովրդին և առաջնորդներին են իմաց անում, և ոչ ամենավերջ ծանօթութիւն անդամ տալիս են եկեղեցւոյ եպիսկոպոսներին և ազգի ժողովրդականներին, այլ իրանք իրանց, չենք իմանում թէ հոգեւոր և գերագոյն ժողովներն մասնակից լինում են թէ չէ՝ այս իրողութիւնը թաղուն պահելով, թոյլ են տալիս, որ մի անձնական կամք տնօրինէ ինչպէս որ կամենայ և Յակոբոսի բերնէն մի նամակով իմաց են անում Սինոդին թէ Թուրքիոյ Հայք ամեն կերպով հաւան են նրանց ընտրածին և թէ ինչպէս յառաջ, հիմայ էլ իրանց կողմէն պատգամաւոր կանուանեն վասիլ Պէհպուտեանցին այն ժամանակուայ կովկասու փոխարքայն և թէ Թուրքիայումը կաթողիկոսութեան ընտրելի արժանաւոր անձինք են. Յովհաննէս Պատրիարք Երուսաղէմի, Յակոբոս Պատրիարքն Կոստանդնուպոլսոյ, Իզմիրու առաջնորդն Պուրսայի Պողոս եպիսկոպոսն, Պուրսայու առաջնորդ Գէորգ եպիսկոպոսն և Օրթագիւղի քարոզիչ ու նախորդ Պատրիարք Պոլսոյ Մատթէոս արքեպիսկոպոսը։ Այս բովանդակութեամբ Յակոբոս Պատրիարքն և այն ժամանակուայ հոգեւոր և գերագոյն ժողովները մի նամակ են գրում և ղրկում Էջմիածին Պոլսոյ Ռուսական դեսպանութեան ձեռքով[1]։

[1] Մեր Պատրիարքարանի մի զարմանալի բանն էլ այն է որ, որ և է գրուած կամ հաղորդութիւն Էջմիածնի հետ, պէտք է, որ միշտ, չենք իմանում ինչո՞ւ համար, Պոլսոյ դեսպանատան միջնորդութեամբ անէ, մինչդեռ Էջմիածին էլ իր կողմէն՝ Պոլսոյ Պատրիարքարանի արածին փոխարէն, պէտք էր որ իր հաղորդակցութիւնն ու թղթակցութիւնը Թիֆլիզու Օսմանեան ընդհանուր հիւպատոսարանին ձեռքով անէր, (Ատուած մի արասցէ մի այսպիսի բան անէ Ռուսական բռնաւորութիւնը անաստուածութիւն կանուանէր այդ արարմունքը) բայց այնպէս չէ անում, այլ նա էլ իրան միջնորդ ունի կովկասու փոխարքայութիւնը այսպիսի եկեղեցական հաղորդակցութեանց համար։ Ընթերցողն կը խնդրենք այս բանիս վրայ իր ուշադրութիւնը դարձնել և յետոյ իր դատողութիւնն անել այն շինովն և քսփուս Հայուն ասածին վրայ, որ իրան ճշմարտասէր անուանելով, լրբօրէն ստեր է ասում պնդելով թէ. Ռուսաց կառավարութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ գործերի մէջ չի խառնուում երբէք։ Թէ որ կամենանք այսպիսի մանր մանր բաներով ցոյց տալ թէ որչափ Ռուսիոյ ամենողորմած կայսրն ու իր կառավարութիւնը իրան բան ու գործ է արած օտար դաւանութեանց գործերի միջամուխ լինելու, վերջը չի գալ, ուրիշ ժամանակի կը թողունք այս խնդիրը պարզելը։

Էջմիածնի Սինոդը ստանումէ թէ չէ՝ այդ նամակը, տէրութեան յայտնումէ նրա բովանդակութիւնը, չյայտնել չէր կարող, Սինոդի Պրոկուրորէն հաշիւ կը պահանջուէր. բացի սրանից միաբանութեան առաջուայ վարմունքն էլ իրան կըստիպացներ ոչ մինչ չթագդունել կառավարութենէն և արդէն Ղուկաս եպիսկոպոսի դիմադրութիւնը Այվազեան Գաբրիել վարդապետին Բեսարաբիոյ և Նոր Նախիջեւանու առաջնորդ նշանակուելուն, որ բռնակալութենէ բռնադատուած յանձնառու էր եղել հաւան կենալ. թէև իր առաջին և դլխաւոր անհաւանութեան պատճառը մէջ տեղէր դրել, ասելով թէ՝ միայն ամենայն Հայոց Կաթողիկոսին կը պատկանի առաջնորդների նշանակելը, բայց իր ձայնը կայսեր ահարկու կամքին դէմ չնչին մի փուք էր եղել, ուստի և չէր կարելի ըսելի լինել. Այն և այս պատճառները, և ամենէն աւելի Զալալեան Սարգսին բարձր ազդեցութիւնը փոխարքայի պաշտպանութեամբ ամեն ազգային եկեղեցական գործերի վրայ, միաբանութիւնը ստիպեցուցին լուռ ու մունջ մնալ և լոկ հանդիսատես լինել տէրութեան խաղալու խաղին Հայաստանեայց Եկեղեցւոյ գործերի մէջ, որն որ ներկայանումէր բուն իսկ Հայաստանեայց Եկեղեցւոյ մի քանի երեւելի համարուած անհարազատ որդիքների և բարձրաստիճան տգէտ ու անուսում եկեղեցականների դերասանութեամբ. Ուստի տէրութիւնը իսկոյն պատրաստումէ իր խաղը խաղացող դերասաններին, Պօլիս՝ իրան դեսպան Լաբանով իշխանի ձեռքով. Պէտերբուրգ Այվազեան Յովհաննէս աղայի և Լազարեանց ձեռքով և Թիֆլիզ, առաջին կարգէ մարդ Զալալեան Սարգիս եպիսկոպոսին իր արբանեակներովը, իսկ աշխարհականներէն Աբէլ Գուրգէնբէգեանցին, որ գնդապետի աստիճան ունէր, Սահակ Թումանեանցին, սա էլ իբրեւ թէ իշխանաղն է և զօրապետի աստիճան ունի. Միքայէլ Լորիս Մէլիքեանցին, որ դեռ նոր էր եղել զօրապետ, սա ոչ իշխանաղն է և ոչ էլ երեւելի քաղաքացւոյ որդի, բայց խելքն ու միտքը Վասիլ Պէհպուտեանցի շաւիղէն գնալ է և վերջին ծայր փառասէր է. սրանք էին առաջին դիւցազունքը. Երկրորդ կարգէն էին, Աղէքսանդր Թահիրեանց, Դաւիթ Սուրէնեան, որու վրայ խօսած ենք արդէն, և Բագրատ Ալաթաթեան. սրանց վրայ առանձին և

երկար պիտի խօսինք իրանց կարգին և ուրիշ մանր մունր անՀանմարդիկ։ Իսկ Գէորգ Ախվերդեանցն, բժիշկ Ամիրեանցն և Աֆթանտիլեանցն յետոյ են մտնում աղգայնոց հրաւէրով այս գործի մէջ։ Պոլսոյ Աղգայնոցմէ այս խաղը ներկայացընողներն իրանց թագցնումեն հոգեւոր և գերագոյն ժողովների քամակը և Յակոբ և Գէորգ պատրիարքների փիլոնի տակին, թէև յետոյ այդ մարդիկն էլ երեւան են դուրս գալի ինչպէս պիտի տեսնեն մեր ընթերցողներն այս յիշատակարանին ընթացքումը, ինչպէս և մենք էլ այն ժամանակ մեր աչքովն տեսանք և ականջովը լսեցինք այս խաղին մէջ հանդէս դուրս եկողները։

Ինչպէս սկզբումն ասացինք, Ռուսաց կառավարութիւնը քաջ կը ճանաչէ իր բանտարկութեան (էնդրիկ) խաղը խաղացող անձինքն ընտրել և այդ խաղի դերերն էլ լաւ բաժանել. դա՛, մի ազգի կամ ժողովրդի մէջ մի գործ պատրաստելիս, այն ազգէն, այն ժողովրդէն այնպիսի անձինք կընտրէ, որ արդէն նրանց անձնական և ընկերական դրութենէն ապահովէ, որ նրանք իրանց հոգւով մարմնով իրան պիտի ընծայեն. որ տեղ որ դատարկապորտ, պարտքի մէջ խեղդուած, մի քանի անգամ կոտր ընկած (մանկացած), վարքով ու բարքով ապականուած, ամեն կեղտոտ ու անարդ գործերի մէջ մտած ու եղած, ամեն քսխութիւն և կեղծութիւն սովորած, բոլորովին զուրկ բարոյական և մտաւոր դաստիարակութենէն և ամենէն աւելին ուտելու հացի կարօտ կամ վերջին աստիճան փառասէր և արծաթասէր, մի մարդու տունը քանդելու, մի ազգ, մի ժողովուրդ մի հասարակութիւն իրար անցնելու, իրար սպաննելու յանձնառու, շատ վեհ սրտեր յուսահատութեան դուռը հասցնելու կարող, շատ արդարների իրաւունքներն ոտքի տակ առնելու յանձնառու եղող մարդիկ կան, նրանք այն ազգի, նոյն ժողովրդի և նոյն հասարակութեան մէջ ասպարէզ դուրս կը բերէ և նրանց ձեռքով իր գործի պատրաստութիւնը կը տեսնէ։ Իսկ երբ որ գործի առաջին պատրաստութիւնը կը պրծնի, և իր կատարմանը դրեթէ հասնելու վրայ կը լինի, այն ժամանակ անձինքն ու դերերը կը փոխուին մեծամեծ ու նշանաւոր մարդիկ բեմը դուրս կը գան խաղը վերջացնելու։ Կը տեսնես, որ

այս մարդիկ հագուած և զուգուած, շքազգեստներով կուրծքերնուն վրայ նոր նոր աստղերով զարդարուած, իրանց անունների վրայ նոր նոր պաշտօնների տիտղոսներով աւելցուած ամեն կողմէն նոր նոր աղբիւրներ բացուած իրանց փառասիրութիւնը յագեցնելու համար. այս մարդիկն ասում են՝ այն ժամանակ կը տեսնես, որ ինչ քաջութիւն և արիութիւն, որ չեն արել երբէք՝ այն քաջութեամբ և արիութեամբ կը փառաւորուին. իրանց կեանքումը որ երբէք ազգի համար չեն մտածել, եկեղեցւոյ համար մէկ փող չեն մխել, կը լսես, որ իրանց ուշքն ու միտքն ազգասիրութեան մի վառարան է եղած, կասեն, բայց ի՞նչ անես որ, կասեն, անկարելիութիւն կայ, Հայոց ազգն ապերախտ է, անմիտրան է կռուասէր և այլ սրանց նման ոչ ու փուչ պատճառներ արդելք կը վեր կացնեն նրանց ազգասիրական գործերին համար, մի խօսքով այս մարդկանց ամեն մի խօսքն ու գործն այս միջոցին հանճարով եղած կը համարուի և բարքն ու վարքն էլ առաքինութեամբ։

Հէնց այս յանկի մարդիկն էլ դուրս եկան այս միջոցին որ ու վրայ խօսում են մեր ազգային ու եկեղեցական ամենէն սուրբ, ամենէն վսեմ և ամենէն ծանր խնդրի հրապարակին մէջ։ Այս մարդկանց ամենքն էլ դրեթէ ծանօթ են մեզ, որ տեղ որ գտնուել են, թէ Թիֆլիզ, թէ Պոլիս, թէ Շուշի, թէ Էջմիածին, թէ Մոսկուա, թէ Պետերբուրգ և այլ տեղուանք. մենք հիմայ այս տեղ հարկաւոր չենք համարել դրանց ամենքն էլ մատնացոյց անել, թէ և ոմանք մեռած են և ոմանք կենդանի։ Արդէն խօսել ենք Ղրիմեցի Դաւիթ Սուրէնեանի վրայ մեր առաջին ամսագրին մէջ և ծանօթ է դա մեր ընթերցողներին. հիմա մի երկրորդ անձն է ներկայանում մեր առաջը Կաթողիկոսական ընտրութեան գործի մէջ. այս անձն է, Յովհաննէս բէգ Յակոբ Ամիրաեան Մամիկոնեանց[1], սա Դաւիթն յետոյ նամակաբեր է լինում Պոլիս Էջ-

[1] Այս Մամիկոնեանց բէգերի մասին, որոնք չորս եղբարք են, հարկաւոր ենք համարում մի ծանօթութիւն տալ մեր ընթերցողներին։ Սրանք այն ժամանակ ազգային խնդիրների առաջարկումն են երեւան դուրս գալի, երբ Ռուսականութեան վրայ խնդիր է բաց լինում և պաշտպան են հանդիսանում Ռուսաց կառավարութեան. լսում ենք, որ այս մեր օրերումն էլ Կարապետ բէգ

միածնի կողմէն և Սրբազան Յակոբ Պատրիարքին ներկայանալով առաջարկում է նորէն իրանց պատգամաւորների ընտրութեանը մասին, համբաւ բերելով թէ Վասիլ Պէհպուտեանցը վախճանած է։ Ասում են, թէ Յակոբ Պատրիարքն ու ազգային վարչութեան գլուխները նրան հարցում են թէ Հայոցմէ Թիֆլիզ, որո՞նք են նրամէն յետոյ, Վասիլ Պէհպուտեանցէն, նշանաւոր և երեւելի մարդիկ տէրութեան առջև և ազգին մէջ. նա էլ պատասխան է տալի, առանց վարանելու իհարկէ առաջուց պատրաստուած լինելով՝ թէ Աբել Գուրգէնբէգեանցն ու Խաչակ Թումանեանցն. էհ ուրեմն, մենք

Մամիկոնեանը Կաթողիկոսի մահուան վրայ ստոյգ տեղեկութիւն տալու է վեր կացել և մեր ասածների Լազարեանց ուսումնարանի մասին, հերքել։ Մենք այդ մարդուն ամենեւին պատասխան տալու յօժար չենք, որովհետեւ դա նշանակութիւն չունի ամենեւին մեր Հայկական գրականութեան ապարիզումը, բայց այս տեղ ստիպուած ենք լինում յիշատակարանի ամբողջութեան համար, Մամիկոնեանց Յակոբ Ամիրայեան բէգերն մի առ մի ծանօթացնել մեր ազգին թէ ովքե՞ր են, ի՞նչ գործ կանեն և ի՞նչ նշանակութիւն ունին Հայոց ազգային կեանքի մէջ։

1828 թուի պատերազմին յառաջ, Կարինի կուսակալին մէկն ունենում է մի սարբաք Հայոց ազգէն Թօփալ Յակոբ անուն։ Այս Թօփալ Յակոբն այդ փաշային մեծ գումար առնելիք է ունենում և չէ կարող լինում յետ առնել, ուստի այս բանի համար մեծ զրկողութիւն տեսնելով, կասէն, Օսմանեան կառավարութենէն, դիմում է Ռուսաց տէրութեան պաշտպանութիւնը խնդրելու, և իր որդւոցմովը անց է կենում Թուրքիայէն դէպի Ռուսիա և այն տեղ մեռնում է, թողելով իր որդիքն ու իր՝ Բարձրագոյն դռնէն պահանջած կարողութիւնը Ռուսաց կառավարութեան շնորհին։ Կարապետ բէգ Յակոբ Ամիրայեան Մամիկոնեանցն, սրանք ամենքն էլ իրանց բէգ կանուանեն և Մամիկոնեան անունով էլ կը զարդարուին։ Բայց սրանք չեն միայն, մեր նախնեաց անուններովն այսօր Ռուսաստանումը իրանք իրանց պատիւ տուողները։ Ռուսք Հայաստանի մէկ մասին տիրելուց յետոյ, մինչեւ այն ժամանակ կորած մոռցուած ազգանուններ և ցեղեր, մինն էլ յանկարծ, չէնք իմանում, ինչպէս գուրս են գալի։ Համատանէն մի Հայ վաճառական Թիֆլիզ է գալի, փող է ունենում որա, նրա փոխ է տալի, մինն էլ տեսար, որ Համատանցին լինում է իշխան Ամատունի։ Պաղտատու մի թիւթիւնի վաճառական, բնիկ Վանեցի, Երեմիա անուն, Թիֆլիզ է գալի դէսուդէն ընկնում մի փոքր փող ճարում Ներսէսէն պաշտպանվում է և լինում Արծրունի։ Տիրացու Վարդան անուն մէկն էլ բնիկ Կարնեցի, առաջին կարգի չունեւորին մէկը, զուրկ որ և է ազգային կրթութենէ, խաւեարի առուտուրի մէջ է մտնում, շատ փող է դադում, Թիֆլիզու քաղաքագլուխ լինում. մինն էլ Արշակունի անունով փառաւորվում է և լինում Արշակունեանց ցեղէն։ Այսպէս Ղօրղանեանք լինում են Խորխորունիք, Թումանեանք, Մամիկոնեանք, մի խօսքով Ռուսա Հայոց մէջ այսօր լիքն են նախարարական ցեղերէն որոնց, ուր տեղ գնաս կը պատահիս։ Աղեքսանդր Թահիրեանց

էլ նրանց ենք ընտրում մեր կողմէն պատգամաւոր կաթողիկոսի ընտրութեան համար Էջմիածին գնալու. պատասխանում են նրան և անմիջապէս թղթերը գրում, ստորագրում և ղրկում են Էջմիածին նշանակելով նրանց՝ իրանց կողմէն ընտրուած պատգամաւոր։ Այս ամեն բաներն ամենքն էլ Թուրքիոյ Հայոց ժողովրդէն թագուն է լինում, Յովհաննէս, Յակոբոս և Պօղոս արքեպիսկոպոսներն հասկանում են վերջապէս թէ ի՞նչ խաղ է խաղում ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան մէջ։ 1836 թուի փալաժէնիայն տէրութեան հրամանով ոտնակոխ է լինում, Ռուսաց կառավարութիւնն

անուն մէկը կայ Թիֆլիզ, որ երբեմն Ներսիսեան ուսումնարանին հոգաբարձու է եղել, Զալալեանց Սարգիս եպիսկոպոսի ճանապարհորդութիւն 'ի Հայաստան անուն գրքին մէջ Վիշապայանց, այսինքն Աշդահակայ ցեղէն դուրս է բերած նրա ազգը, հէնց նրա համար, որ այդ ազգ խաբող գրքին ծախքը Թահիրեանցն է արել։ Անշուշտ այս Թօփալ Յակոբն էլ վերեւն յիշուած հրաշքով Մամիկոնեանց է փոխուել։ Մի ժամանակ Պօլսոյ Պատրիարքարանը վիպական տալու այն Հայոց, որոնք կամենում էին Ռուսաց հպատակ դառնալ կամ մի ժառանգ ստանալ, առատ ազդիւր ունէր և կարող էր այնպէս հին արձանագրեր ունենալ, որոնց մէջ Հայաստանի բոլոր ցեղերը չէմ իմանում ի՞նչպէս կամ ե՞րբ արձանագրուած էր երեւում. այս Թօփալ Յակոբին ցեղն էլ անշուշտ այդ ցանկի վեհազն և քաջազն ցեղերի վաւերագրութեամբն է։ Բայց, արի՛ տես՛, որ այսօր ո՛չ անունն է, ոչ փողն է, ոչ զգեստն է և ոչ պաշտօնն է մարդն մարդ անողը, այլ իր ազգային, բարոյական և մտաւոր դաստիարակութիւնը, այս փորձաքարով ամեն մարդ այսօր փորձւում է, ոչ վեհազնութիւնը, ոչ պատուաւոր անդամութիւնը, ոչ շքազգեստը, ոչ սուրը, ոչ թուրը և ոչ նշաններն կարող են տմարդի, տգէտ, վատ մարդուն մարդ շինել։ Այդպէս ձեւացու ու շինծու մարդկութիւնը մեր Հայոց համար չէ, կարելի է, այդ շատ մեծ նշանակութիւն ունենայ Ռուսաստան, բայց մեր այսօրուայ ճշմարիտ Հայոց մէջ այդ պատիւները նշանակութիւն չունին և պիտի չունենան։

Տեսնենք, հիմա այս Յակոբ Ամիրայեան Մամիկոնեանց կոչուած բէգերն իրանց անուան համեմատ ի՞նչ դրութիւն ունին մեր ազգային կեանքի մէջ։ 1853 թուին երբ մենք Տրապիզոն հանդիպեցանք Թիֆլիզ գնալու համար, մի անձ ներկայացաւ մեզ Փէփէեան Աղաճան ազգի վաճառականը. Եւրոպեան սև ըզգեստներով, գլխին սև դտակ մեքենական, պօչաւոր Թիկնոց սև վարտիկով, ձեռին ձեռնոց և գաւազան, քաղաքավարի խօսող, միշտ Մոսկուայէն, Պէտերբուրգէն, Թիֆլիզէն, Ներսիսի հետ, Լազարեանց հետ և այլ նշանաւոր մարդոց հետ ծանօթ։ Այս անձը մեզ իր տուն հրաւիրեց. գնացինք իր ամուսինը մեզ ներկայացուց, որու հետ նոր էր ամուսնացել, մեզ իր պապերի պատմութիւնն արաւ, իր առնելիքի մասին խօսեց չենք իմանում ո՞ր փաշային, իր ազգասիրութիւնն ու ուսումնասիրութիւնը մեզ հասկացուց. Հայաստանի վրայ տեղեկութիւն տուաւ և իր բարեկամութիւնը մեզ շնորհելով մերինն էլ իրան համար խնդրեց ու այնպէս բաժնուեցանք։ Իհարկէ այս մարդն իմ պատանեկան

*է միայն աղատ իր երկրին մէջ իր հաստատած օրէնքն զանց առնելու երբոր հարկը, այսինքն իր շահը պահանջէ։ Հայոց նախնական ազգութիւնը կաթողիկոս ընտրելու մասին բոլորովին մոռացվումէ։ Ամբողջ Թուրքիոյ Հայոց կողմէն մի կամ երկու աշխարհական Յակոբ Պատրիարքին փիլոնի տակ մնած, թէ նոյն իսկ Յակոբին խաբելով և թէ Թուրքիոյ բոլոր Հայոց աղգին և նրա եկեղեցւոյ ուխտին, պատգամաւորներ են ընտրում 100 ձայնը երկու անհարազատ Հայու մէջ են ամփոփում ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրելու համար։*

*Ուստի վերեւն յիշուած ընտրելի արքեպիսկոպոսացմէ,*

*երեւակայութեան վրայ մի տպաւորութիւն պէտք էր անէր, բացի դրամէն դրա անուն էլ ինձ ծանօթ էր շատ ժամանակ առաջ իմ մի մօրքեռորդւոյն Սողոմոն Նուպարեանին Լազարեանց ուսումնարանէն Իզմիր դառնալու ընկերակից լինելը։ Բայց էլի հարց ու փորձ արի Աղաճան աղային թէ ի՞նչ մարդ է Մամիկոնեանը, ի՞նչ կը գործէ, ի՞նչ պաշտօն ունի. դա ինձ տեղեկացուց թէ նա ոչ գործ ունի, ոչ փող ունի, ոչ պաշտօն, այլ այնպէս ստեր ջարդերով, պօշ պօշ բաներ ասելով կապրի, — կարծեմ թէ մի փոքր ամնական կստանայ Ռուսաց կառավարութենէն իր ասածին նայելով — Այո՛, այս տեղ և Պոլիս անց կացած բաների մասին թագուն տեղեկութիւն կը տայ — ասա՛ սրան որ մի լըրտես է — հէմէն ատանկ բան մը, ասայ Աղաճանը։ Ահա՛ այս Յակոբ Ամիրայեան Մամիկոնեանց Կարապետ բէգն է՝ որ Լազարեանց ճեմարանին պատուաւոր անդամ (թերեւս ուրիշ տիտղոսներ էլ ունենայ մեզ անծանօթ) մեզ չճանաչում և վեր է կենում Ռուսաց կառավարութիւնն է պաշտպանում ու իր աչքովը սեսած ու չճանացած Լազարեանց ուսումնարանին ազգային լինելն կամենում է հասկացնել մեզ և մէկ օրագրապետ միւս օրագրապետին է դիմում, իր գրուածքը սրա, Նրա ուղղել է տալի և լըրաբար յանդգնում է ասել իմ հնքաւորի մասին (Գարեգին Մուրադեանցին) թէ կոնդակ ունի իր մօտն Մատթէոսի Նրա Շուշուպ ուսումնարանէն դուրս հանելուն և թէ ես խաբուած եմ Նրամէն և թէ ինքն կը ցաւի եղել ուրիշ անձէ թելադրուած իր ամենողորմած կայսեր կառավարութեան դէմ խօսելուս համար և ուրիշ այսպիսի բաներ։ Արդ մենք էլ, ոչ թէ իր դրածին և իրապէս մի անձի վայրախօսութեան կը կամենանք այս տեղ պատասխանել, որովհետև իրանց խօսեցնողը Ռուսի ոսկին է և ոչ ուրիշ բան, այլ մեր ազգայնոց ցոյց տալ, իբրեւ մեր ասածների ապացոյց, թէ Ռուսաց կառավարութիւնը ինչ անձինք կը գործածէ ուրիշ ազգերու մէջ իր բանսարկութեանց մեքենան շարժելու համար։*

*Այս Կարապետ բէգը մի եղբայր էլ ունի Յովհաննէս աղա անուն, մենք սրա յայտնի մի պաշտօն ունենալը չենք գիտեր, դրան առաջին անդամ տեսած ենք այս տեղ Պոլիս Մատթէոս Կաթողիկոսի մօտ, Տատեան Պօղոս պէյի տանը և Լորիս Մէլիքեանցի մօտ, հարց ու փորձ անելով իմացած ենք բուն իսկ Ռուսաց երկրի մարդէ թէ Յովհաննէս աղայի նշանակութիւն է Պոլսոյ մէջ ի՞նչ կըլի ի՞նչ չըլիր, Պատրիարքարան, ամիրաների, եպիսկոպոսների մէջ բոլորն էլ մտերմութեամբ Թիֆլիզ Զալալեանց Սարգիս եպիսկոպոսի հաղորդել։*

առաջինն Յովհաննէսը՝ ոչինչ շարժում չի անում իրան համար, անշուշտ իր պաշտօնը նախապատիւ համարելով Կաթողիկոսական դահէն. Պողոսն իր հրաժարականն ուղղակի Էջմիածին է ուղարկում, պատճառ բերելով թէ ինքն Ռուսաց օրէնքին և լեզուին տեղեակ չլինելով իրան համար թէ դժուար է և թէ ծանր է Կաթողիկոսական բարձը. Պողոսի հրաժարականը մենք էլ ենք կարդացել Ղուկաս արքեպիսկոպոսի մօտ։ Նոյնպէս Յակոբոս Պատրիարքն էլ իր հրաժարականն է տալի ընտրելեաց ցանկէն դուրս դալու, իր ծերութիւնն ու տկարութիւնը պատճառ բերելով։ Ուստի մնում է ասպա-

Մատթէոս կաթողիկոսէն էլ մի խնդիր ունէր մատուցած, այս խնդիրն էր, որով թէ իր ճանապարհորդութեան և թէ թղթակցութեան վճարման համար 500 մանէթ էր պահանջում։ Մատթէոս ասում էր թէ 500 փարայ չունիմ, դա էլ պատասխանում էր թէ Էջմիածին անտուկներով ըռեալներ կան, որոնց ամենքն էլ իրանը պիտի լինին — է՛հ ուրեմն, թող տան այդ անտուկներէն քեզ 500 ըռեալ. ձեր վերհատուցութիւնը թող մի հրամանագիր տայ, կասէր Յովհաննէս աղայն իսկոյն կը վճարուիմ. Մատթէոսի ձեռքէն հրամանագիրը կտանայ թէ չէ, անմիջապէս Թիֆլիզ կը թողի կերթայ Յովհաննէս աղան. այս տեղեկութիւնը մենք Մատթէոս կաթողիկոսէն ենք առած։ Թիֆլիզումն արած գործն է այս Յովհաննէս աղային առաջնորդարան գնալ. դէսուդէն ման դալ, Հայոց մէջանց կացածներն իմանալ, Երեւակ, Թուչնիկ օրագրերը ցրուել, Սարգսին և Սարգիսականներին, եպիսկոպոսներէն և վարդապետներէն Պօլսոյ օրագրերի համար փող ստանալ և օրագրապետներին չղրկել, շաբաթեղէն շինելու դիրք շինել, Շահազիզեան Ցարութիւն աղայի ծախքով տպել, Կաթողիկոսի հրամանով առաջնորդների ձեռքով քահանաների վրայ վճառել, Օսմանցւոց երկրէն Թիֆլիզ եկող ճամբորդների առաջնորդ լինել Ռուսի հպատակ դառնալու և այլ սրանց նման պատուաւոր զբաղուանքներ։ Բայց Կարապետ բէգն իր եղբօրը քսան ու հինգ տարի աշխատող կանէ այդ արհեստ շաբաթեղէն շինելու դրքին իբրեւ երեւելի գործի, Ներսէս Կաթողիկոսի ազգական և այլ չինք իմանում ինչ անձ, մինչդեռ խեղճութեամբ Գալուստ Շիրմազանի տանը մի խցի մէջ կը բնակէր. սրմէ միշտ գանգատում էր Գալուստ Շիրմազանեանցը։ Այս Կարապետ բէգն և մի Մըկրտիչ անուն եղբայր էլ ունի, սա եպիսկոպոսների, աւագերեցների ծախսարարութիւն կանէր Թիֆլիզ, երբ Մատթէոս Կաթողիկոսն հրամայեց Թիֆլիզու հոգաբարձուներին սրան ուսումնարանի տնտեսին օգնական անել. Նրանք էլ կաթողիկոսի հրամանէն ստիպուած ամէնը տաս մանէթով վեր առան դրան իրանց մօտ իբրեւ մանր մունր բաների ծախսարար ուսումնարանին. յետոյ նորէն մի հրաման բերել տուաւ կաթողիկոսէն այդ Մկրտիչ բէգն, որ հոգաբարձութիւնն իրան 500 մանէթ կանխիկ տայ, իսկոյն կատարուեցաւ կաթողիկոսի հրամանը. քիչ ժամանակ անց կացաւ մի հրաման էլ եկաւ Գոնսիստորի վրայ, որ վանքի կալուածներէ մի տեղ տրուի նրան տուն շինելու համար և վարձ կամ դրամ չպահանջուի. այդ հրամանն էլ կատարուեցաւ և Մկրտիչ աղան մի տան տէր եղաւ աղքի փողով։ Հոգաբարձութիւնը գանգատեցաւ Մկրտիչէն, կա-

րէգն աղաս Մատթէոսին ու Գէորգին. սրանք սկսում են անդադար աշխատել մեծ մրցողութեամբ կաթողիկոսական դահին վրայ բարձրանալու. Ռուսաց տէրութեան աչքը միշտ Գէորգին վրայ է լինում, բայց Պօլսոյ աղգայնոց մի քանիսի ջանքը Մատթէոսին կաթողիկոս անելու է լինում։ Այս մի ջոյնն է որ, եթէ չեմ սխալվում, Յակոբոս Պատրիարքին հրաժարուելու կամք ունենալը Պօլսոյ Պատրիարքութենէ յայտնվում է։ Միևնոյն միջոցին Ռուսիոյ Հայոց վիճակների բոլոր պատգամաւորները Էջմիածին են գնում, Թիֆլիզ դեռ իր պատգամաւորն ընտրած չլինում։ Ներսէս կաթողիկոսի մահ-

թողիկոսն պաշտպանեց. աւագերէցներն ու առաջնորդ զգուշութեամբ կը վարուէին հետը, որպէս զի իրանց չմատնէ կաթողիկոսին։ Իսկ Կարապետ բէգի փոքրիկ եղբայրն որուն անունն է Գրիգոր, Մատթէոս կաթողիկոսի հրամանագրով մի վարժատուն բաց արաւ Թիֆլիզը որու վրայ տէրութիւնն էլ աչք խփեց, բաւական աշակերտներ ունեցաւ և ուսումնական անձինք էլ գնում էին դաս տալու, ինքը անկարող դատարակութիւն անելու, վերակացութիւն էր անում աշակերտների վրայ և իր անունն էր տուել իր դպրոցին, յետոյ մի տարի հաղիւ շարունակեց թէ չէ կանոնաւոր կերպով, մի հրաման բերել տուաւ կաթողիկոսէն, որ եկեղեցւոյ մի մեծ տունը իրան իբրեւ թէ վարձով տրուի, կաթողիկոսի հրամանն իսկոյն կատարուեցաւ և 500 մանէթնոց մի տուն Հայոց եկեղեցին Գրիգոր բէգին տուաւ դպրոց շինելու, բայց դպրոցն փոխուեցաւ թատրոնի, տղաքն էլ ուսումն առնելու տեղ թատերական եղան, ուսուցիչներն մի քանի ժամանակ պարտքով դաս էին տալի յուսով թէ կատանան իրանց վարձը. ժամանակ անց կացաւ բայց Նրանք փող չստացան. չորս հինգ ուսուցիչներ որոնք ամենքն էլ փող կը պահանջէին իրանց վարձ, ոչ մէկը ձեռք չբերին. որոնց կարգէն է նաև իմ կնքաւորն Գարեգին Մուրատեանցն, որ դպրոցումն առաջին ուսուցիչն էր, ուսուցիչների վիճակին ընկաւ և վանքի տունը, մէկ կամ երկու տարի վարձ կարող չեղաւ ստանալ, բայց Գրիգոր բէգ Յակոբ Ամիրայեան Մամիկոնեան Նրանց մի յուսով կապրեցնէր, կասէր թէ, ահա՛ Սիլոսան հաղարապետը, այս մարդն էր Վրացի քէօլէ Եգիպտոս ընկած ժամանակով, յետոյ յետ տարած Վրաստան հաղարապետի պաշտօն ստացած, քրիստոնեայ եղած և Հայ քահանայի փեսայացած. Պօլիս գնաց մեր դատը շահելու Օսմանեան կառավարութենէն, որմէ 10,000,000 կուզենք, վճիռը տրուած է, այսօր վաղն էլ փողերը պիտի ստացուի, այն ժամանակ առատ առատ ձեր ամենուն էլ վաշխովը կը վճարեմ պարտքերս։

Այսպէս վարձատրուեցան Մամիկոնեան եղբարք Մատթէոս կաթողիկոսէն, չենք խմանում իրանց Հայոց ազգի՝ ո՞ր արած ծառայութեանը համար, ընդհակառակն թշնամութեանը համար պիտի լինի, հիմա էլ Կարապետ բէգն առանց ամաչելու, վեր է կենում իրա նման մի անամթի և յայտանի կաշառուած մարդու գրչով, Պետրոս Շանշեանցի, Գարեգին Մուրատեանցի վրայ խօսելու, և մեր վրայ էլ ցաւելու, որ Թիֆլիզցու բանտարկելոց համար, տեր ողորմեա՝ ասել ենք խնդրել մեր եկեղեցիումը. այո՛ խնդրեցինք և ասել էլ

ունէին յետոյ Թիֆլիզու. Հայոց մէջ մեծ առարկայ է լինում նրա յանկարծահաս վախճանելու դէպքը, նրա կիսատ մնացած գիտաւորութիւնքը և ձեռնարկութիւնքը, և մանաւանդ նրան մի արժանաւոր յաջորդ գտնելու յուզմունքը և շարժմունքը։ Մի խորին տարակուսանք պաշարումէ առհասարակ բոլոր Հայոց ժողովրդին, որովհետեւ որչափ իրանց խորհուրդների մէջ աղում և մաղում են բոլոր եկեղեցականները, ոչ ոքին չեն տեսնում որ Ներսիսին նմանի, որ եթէ կարող չլինի նրա կիսատ թողածները շարունակել, գոնէ կարող լինի եղածը պահպանել և չկորցունել։ Այս տարակուսանքն ու տատամսութիւնը պաշարած է լինում. ոչ միայն մեծամեծներին և բանիմացներին, այլ առհասարակ բոլոր ժողովրդին, մինչ զի այսպէս է երգում այս ժամանակի համար ժողովրդական երգիչներին մինը։

տուինք իր փորի ցաւի համար; վասն զի գիտէինք, որ Ռուսաց կառավարութիւնը իրան նման լրտեսների խօսքին մտիկ անելով, Գրիգոր Իզմիրեանցին, Համբարձում Լինֆիաճիեանցին և այլ ուրիշ պատուաւոր քաղաքացոց անիրաւի տեղը բանտարկել էր և նեղացնում էր, գիտէինք, ասում ենք, վասն զի Աղեքսանդր Թահիրեանցի, այս տեղ Պոլիս գրած նամակները մեր աչքին առջև ունէինք և կարդում էինք նրա մէջ Թիֆլիզումը տրաքուելու փոթորիկին պատրաստութիւնը. Այս նամակներն ժամանակին Կարապետ բէգին աչքին կը տընկենք, այն ժամանակ կարելի է ինքն ու իր ընկերն համոզուին թէ որո՞նք են ազգին թշնամիներն և թէ Ռուսաց կառավարութիւն ի՞նչ մարդիկ ունի իրա ձեռին Հայոց ազգի կաթողիկոսութիւնը կործանելու, Հայոց ընտիր անձինքը բանտերումը մեռցնել տալու, հանճարաւորները վատահամբաւ հռչակել տալու։ Անանուն ճշմարտասէր Հայու ձեռքով, ազգի համար գլուխը դնող մարդուն վըրայ յայտնի ստեր խօսելու և իր ազգայնոց աչքին կասկածաւոր հանել տալու։ Ցոյց կը տանք ասում ենք Կարապետ բէգին և իրան ընկեր ազգի չարակամ, լուսաւորութեան թշնամի, ճշմարտութիւնը խաւար տեսնող, խաւարն ճշմարիտ տեսնող, Ռուսականութեան, Պապականութեան պաշտպան հանդիսացող, աւելի արծաթասէր քան թէ Աստուածասէր գիտնականին, Մատթէոս Կաթողիկոսի ոչ թէ միայն մէկ կոնդակն, այլ, իր արած վատ գործերի յիմար կոնդակները, Սարգիս եպիսկոպոսի դարանները, Թահիրեանցի նենգութիւնքը և այլն և այլն։

Շնորհակալ ենք Մամիկոնեան Կարապետ աղայէն որ իր անունովը հանդէս դուրս եկաւ մեզ հետ մտքաւելու. շնորհակալ ենք դարձեալ իրա համար, որ ինքն առիթ տուաւ մեզ որ իրան պէս հայքը մեր Թուրքիոյ ազգայնոց ծանօթացուցինք։ Կը հրաւիրեմք հիմայ իր անունը թագցունող ճշմարտասէր Հայուն, որ քաջութիւնն ձեռին առնէ Ռուսական պաշտպանութեան տակ իր անունն յայտնէ թէ իրաւի ճշմարտասէր է և ասպարէզ դուրս գայ մեզ հետ խօսելու, որպէս զի նրան էլ ծանօթացնենք մեր ազգայնոց թէ ի՞նչ մարդ է, սքտասէր թէ ճշմարտասէր։

Զարմի՛ր 'ի քոյ, ո՛վ Հայաստան, պէս ո՞՞ր է քո Ներսէսն,
Ժամանակն պատասխել է եւ չի ձնիլ ենպէսն։

Բայց ի՞նչ պիտի անէին Հայք 'ի հարկէ, Արարատեան Մայր Աթոռը չէին կարող թողել դատարկ, և Հայաստանեայց Հայրապետական վարչութեան հաղարաւոր գործերը երեսի վրայ ձգած, պէտք է շարժէին, պէտք է խորհրդակցէին ու Կաթողիկոսի ընտրութեան հոգը քաշէին, և ահա պատգամաւորներ ընտրելու ժողովքը պատրաստւում է Ներսիսեան ուսումնարանի դահլիճումը շատ մեծ բազմութեամբ։ Այս տեղ լինում են ուրիշ վիճակներէն եկած պատգամաւորները, բոլոր համքարների, էնաֆների ուստաբաշիները, արհեստաւորները և ծերունիները, այս տեղ լինում են քաղաքացիները, աստիճանաւորները, իշխանները, աղնուականները և ուսումնականները. այս տեղ լինում են առհասարակ Թիֆլիզու Հայկական ժողովրդէն ամեն դասու և ամեն կարգի մարդիկ, վասն զի խնդիրն ընդհանուր ազգին է լինում, ամենքն էլ իրաւունք են ունենում ներկայ գըտնուիլ և իրանց կողմէն քուէարկութեամբ և կամ ձայնի առաւելութեամբ պատգամաւոր ընտրել Էջմիածին ղրկելու համար։

Ժողովքի մէջ Աղէքսանդր Թահիրեանց անուն մէկը ամեն ճիգն ու ջանքն է թափում ձայներ որսալու և իրան պատգամաւոր ընտրել տալու. ուստի ժողովքի դումարուած և խորհուրդ արած ժամանակ Թահիրեանցն իր դիտաւորութիւնը յայտնի անելով խռովութիւն է վեր կացնում ժողովականաց մէջ, բայց աղաղակն ու դղրդոցն այնքան սաստկանում է, որ ժողովը գոչում է «Դո՛ւրս Թահիրեանցին, դո՛ւրս Թահիրեանցին»։ Եւ այսպէս անպատուութեամբ հանում են դուրս նրան ժողովքէն, և յետոյ միաձայն հաւանութեամբ պատգամաւոր են ընտրում բժշկապետ Գէորգ Ախվէրդեանցին[1]։ Բայց սա, շատ տարիներ տկար լինելով և հետեւապէս անկարող անձնովին պատգամաւորութեան մեծ գործը կատարելու, բարձրանում է մի աթոռի վրայ ժողովքի մէջ,

[1] Այս մեծահամբաւ Հայազգի ուսումնական և միանգամայն մեծատիճան անձի վրայ ուրիշ ժամանակ առիթ կ'ունենանք խօսել և ծանօթացնել մեր թուրքիոյ ազգայնոց նրա հանճարը և ամենամեծ հմտութիւնն ու գիտութիւնը։

և մի համառօտ և օրինաւոր ատենախօսութեամբ իրան ընտրող ժողովականացմէ շնորհակալ լինելուց յետոյ, յայտնում է իր տկարութեան պատճառով կարող չլինելն այդ քաղցր և միանգամայն ծանր պարտքը կատարելու։ Ժողովուրդն այնքան վստահութիւն է ունենում նրա վրայ, որ առաջարկում է նրան դոնէ մի ուրիշ անձն իրան տեղ ցոյց տալ պատգամաւորութեան արժանի։ Պ. Ալվէրդեանցը ստիպուած ժողովրդի պահանջողութենէն, ցոյց է տալի բժիշկ Ամիրեանցին. իսկոյն Ամիրեանցը ընտրըվում է պատգամաւոր, ստորագրութեամբ վաւերացվում է նրա պատգամաւորութիւնը և այսպէս արձակւում է ժողովը. բայց թէ ո՞վ պիտի ընտրուէր ամենայն Հայոց Կաթողիկոս, ժողովրդեան կարծիքն ո՞ւմ վրայ էր և տէրութեան աչքը ում, Թիֆլիզու ընտրողաց ժողովն դեռ որոշ ու յայտնի չէր իմանում, նոյնպէս և առհասարակ Ռուսիոյ Հայոց ժողովուրդը։ Կ'ասեն թէ, Ա.յվազեան Գաբրիէլ վարդապետի եղբայրը Յովհաննէս աղան Պէտերբուրգի և Մոսկուայի, Նախիջեւանու և Բեսարաբիոյ վիճակի մեծամեծ հայոց մի թուղթ է ստորագրել տալի, իբրև թէ իրանք Գաբրիէլն ուզենան ամենայն Հայոց Կաթողիկոս։ Էջմիածնի միաբանութիւնն, ինչպէս ասացինք առաջ, ջանք է անում եղել, որ ըստ դասակարգութեան լինի ընտրութիւնը, այսինքն Ներսիսէն յետոյ Ղուկաս եպիսկոպոսին վրայ անել ընտրութիւնը, բայց երբ տեսնում է դրա չկամեցողութիւնը, նրա առաջարկութեամբ մաներում են դնում Զմիւռնիոյ առաջնորդ Պօղոսին ընտրել ամենայն Հայոց Կաթողիկոս։ Բայց մի զարմանալի բան՝ Ռուսիոյ Հայոց վիճակի պատգամաւորները թէև Էջմիածին դնալու վրայ են լինում, բայց դեռ չեն իմանում թէ որո՞ւ պէտք է ընտրեն. Գաբրիէլ վարդապետն արդէն իր համբաւն ու անունը կորուցած է լինում ազգային զգացմունք ունեցող ազգայնոց առջեւ, և նրան համարում են մի ժէզուիթ որ իր շահուն համար Ռուսաց տէրութեան էլ է խաբում Հայոց ազգին էլ։ Զալալեանց Սարգիս եպիսկոպոսն, որու համար գլխաւոր աշխատողն էր եղել Աղէքսանդր Թահիրեանցն՝ որ մինչեւ անգամ ժողովքէն դուրս էր քշուել. Ներսիսի մահուանէն յետոյ, ինչպէս ասել ենք արդէն, ժողովրդեան սառնութեան և անվստահութեան

արժանի լինելով, իր կուսակիցներն էլ նոյն համարումն ստացած են լինում հասարակութեան առաջ. բացի սրանցմէ Ղուկաս Արագածունին, ամեն ջանք և հոգս դրած է լինում, որպէս զի նա չընտրուի, և ինքն կ'ասէր մեզ թէ, որպէս զի Սարգիսը չընտրուի, հաւան կացայ Մատթէոսին ընտրութեան, ապա թէ ոչ՝ երբէք Մատթէոս իմ կամեցողութիւն չէր կարող ստանալ կաթողիկոս ընտրուելու։ Տէրութեան հաւատարիմ պաշտօնաւորների մէջ արդէն խմբց լինելով, որ միաբանութիւնը կամենում է Պօղոսին ընտրել և 'ի հարկէ որչափ որ լինի կարող է նաեւ ներգործել պատգամաւորների ընտրութեան վրայ, տարածւում է սրա և նրա բերնէն թէ Զմիւռնիոյ առաջնորդ Պօղոս եպիսկոպոսը, բողոքականութեան հակում ունի, թէ Զմիւռնիացւոց պէս վերջին ծայր աղատական մարդ է, (բոլորովին ծուռ կարծիք) թէ խմբուած լօթրանդ է, այսինքն լուտերական է, անձնապաշտ է, արծաթասէր է, դանդաղ է և այլ սրանց նման բաներ։ Իսկ Յակոբոսը թէև սուրբ մարդ է, բայց միամիտ է, ծերունի ճգնաւոր է, անքաղաքագէտ է, մի խօսքով կաթողիկոսացու չէ. Յովհաննէսը թէ հրաժարականն է տուել, ամենեւին դրա հրաժարական տալը չէ լսուել։ Մնում են դէնը Գէորգն ու Մատթէոսը, որոնց երկուսին էլ ընտրութեան դէմ դնելու Էջմիածնի միաբանութիւնը միտն է դնում վերջին ճիգը թափել, որովհետեւ երկուսին էլ արդէն քաջ ճանաչած է լինում, երկուսին էլ արդէն թագուն գուն գործելն կաթողիկոս ընտրուելու՝ իրանց յայտնի է լինում, երկուսին էլ թէ մարդ կային, թէ հոգեւոր և թէ մտաւոր կարողութեանը վրայ քաջ տեղեակ են լինում, մի խօսքով այնքան քաջ ճանաչում են Էջմիածնեցիք Թուրքիոյ եպիսկոպոսներին, որ մենք պէտք է այս տեղէն մեր եպիսկոպոսների վրայ տեղեկութիւն նրանցմէ ընդունինք։ Բայց Արեւելցիք ինչպէս նաև Հայք, հնուց 'ի վեր մի տեսակ մտքի ծուլութեամբ, կամ թէ իրանց անկարողութիւնը ճանաչելով, չենք իմանում ի՛նչ բանէ դրդուած, բաղդապաշտ են և իրանց կարողութենէն և զօրութենէն մի փոքր վերին երեւածն իսկոյն նախախնամական կառավարութեան ձեռին կը թողուն տնօրինելու. ուստի և այս միջոցին էլ հասկանալով տէրութեան կամքը,

թոյլ են տալի, ինչպէս որ կամենայ այնպէս անէ։ Բայց մենք կը ցաւինք ու շատ կը ցաւինք, որ այդ կամքն իբրեւ Հայոց ազգի կամք է ներկայանում և ոչ թէ Ռուսական տէրութեան ինչպէս որ իսկն էր։ Ահաւասիկ ինչպէս. տէրութիւնը Էջմիածնի բռնելու ընթացքն արդէն իմանալով Կաթողիկոսի ընտրութեան մէջ, ջանք է անում մէկ կողմէն էլ ժողովրդեան կարծիքն իրանին հետ միաւորելու։ Ռուսիոյ ժողովրդեան մէջ հասարակաց կարծիք տարածողն է ընդհանրապէս կառավարութիւնը, հասարակութեան մէջ առաջին տեղի բռնող մարդիկն են, կառավարութեան ծառայող զինուորական և քաղաքական պաշտօնաւորք, եկեղեցական պաշտօնեայք, պատուաւոր քաղաքացիք. սրանց կարծիքը միշտ նպաստաւոր կը լինի 'ի հարկէ կառավարութեան, դէնը մնացող էսնաֆ, արհեստաւոր, մշակ, գիւղացի ճորտ ժողովրդին ունեցած կարծիքն ի՛նչ արժանաւորութիւն կ'ունենայ, քեզ կը թողում կշռադատել. ուստի իր մարդկանց ձեռքով շատ հեշտութեամբ տարածուել էր թէ, Ցաճկաստանի Հայոց մէջ երկու լոյս կայ, որ երկուսն էլ երկու տեսակ լուսով են լուսաւորում ժողովուրդը. Գէորգին, Աստուած այնպէս շնորհքներ էր տուել որ միայն իր ընտրելիներին կը տայ. փառաւոր կերպարանք, փառաւոր շարժմունք, փառահեղ տեսիլ և փառաւոր խօսուած, և սրանց հետ միասին անհուն գիտութիւն քաղաքականութեան մէջ, քաջ Թուրքերէն, քաջ Ֆրանսերէն, քաջ Հայերէն գիտացող, մի խօսքով հին կաթողիկոսների նման մի անձն, թէև հին կաթողիկոսներէ առաջին պահանջուածն էր Սուրբ գրոց հմտութիւն. իսկ Մատթէոսն, մի առանձին հանճար, այնքան քաջ ատենաբան քարոզիչ, որ Պօսուէտ և Մասիլլեօն կարող էին մեծ օգուտ քաղել նրամէն՝ թէ որ իր ժամանակին լինէին, կրօնասէր և աղգասէր այնքան, մինչեւ որ իր գլուխը տալու յանձնառու է եղել Բանինկի հետ ունեցած կռուի մէջ, բարձր հեղինակ Հանդիսարանն ու Բարի մարդ և Բարի քրիստոնեայ անուն գրքերին, որոնք Ռուսաց տէրութիւնն անդամ այնքան հաւանել է՝ որ հրաման է արել Վրացերէն և Ռուսերէն թարգմանել։ Քաջ Լատիներէն, Ֆրանսերէն գիտացող, իսկ Թուրքերէն ու Հայերէն աննման խօսող ու գրող, մինչեւ սուլ-

թաններին զարմացնող, փաշաներին հիացնող, Բողբքական և Պապական քարոզիչներին պապանձեցնող և իր խօսքովն ու ջանքովը հաղար հաղարաւորներ դրանցմէ Հայաստանեայց եկեղեցւոյ ծոցը բերող և այլ սրանց նման մեծ մեծ համբաւներ. հետեւանքն այսպիսի համբաւներին այն պէտք էր լինել, որ այսպիսի անձանցմէ Էջմիածնի միաբանք երբէք չեն ուզել Կաթողիկոս ընտրել, նրա համար որ՝ լուսաւոր ու դիանական են, իրանք կամենալով աղդը միշտ ազիտութեան մէջ մնայ, նրա համար կ'ուզեն եղել, որ տգէտ և անշարժուն մէկին ընտրեն, որ իրանց ուզածին պէս ներդործեն նրա վրայ, այս խօսքերը դլխաւորապէս ասվում էին ակնարկելով Ղուկաս և Մակար եպիսկոպոսներին, որպէս զի ժողովուրդին վրայ իրանց խօսքը նշանակութիւն չունենայ և իրանց կարծիքն իրականութիւն չստանայ.

Այսպէս, տերութիւնը պատրաստելով հասարակայ կարծիքն իրան անձնուէր մարդկանցով, որոնք թէ աշխարհականաց և թէ եկեղեցականաց մէջ կը դտնուին Ռուսիոյ ամեն հայաբնակ քաղաքներումը, թողնում է պատգամաւորներին դնալ Էջմիածին Կաթողիկոսի ընտրութիւնը կատարելու, և ինքն էլ իր վերջին որոշումն անելու համար առաջարկում է Թիֆլիզու պատգամաւորին՝ կամ Գէորգին կամ Մատթէոսին ընտրել անպատճառ, և միւս կողմէն էլ սպասում է իմանալ Պոլսոյ Հայոց կարծիքն, նրանք որ արդէն շատունց պատրաստել էին Մատթէոսին, ոչ թէ իբրեւ արժանաւորին, այլ իբրեւ իրանց պաշտպանածին և այլ շատ կողմէն հարկաւորին, որ այս տեղ հարկաւոր չենք համարում յառաջ բերել. յայտնում են իրանց միտքը Ռուսաց դեսպանին, բայց մի և նոյն ժամանակ Գէորգին էլ բոլորովին զրկել չեն ուզում և՝ զրկելով նրան, Ռուսիոյ անհաճոյ բան անել, մանաւանդ, որ նա յայտնի խնդրում է դոնէ նրան Պոլսոյ Պատրիարք նշանակել. հերիք էր այսքան, Գէորգի պաշտպանների հետ առ երեսս խաղաղութիւն անելու համար Մատթէոսի պաշտպաններին և մի մեծ ազդային խռովութեան առաջն առնելու համար. ուստի որոշում են Պուրսայէն բերել տալ Գէորգին և Յակոբին տեղ յաջորդ դնել. Այս որոշումն իմանալէ յետոյ տերութիւնը կամենում է դիտենալ և Թիֆլիզու Հայոց կարծիք

ընտրացու Կաթողիկոսի մասին և հարցուփորձ է անում մի քանի անձանց, իբրեւ խորհուրդ։ Այդ՝ անձին.քն անձնովին ճանաչած լինելով Գէորգին 1848 թուին և ճանաչելով նրան շատ մօտանց և նրա անձնական և մտաւորական կարողութեան ինչ աստիճանի դէպի լաւ, կամ դէպի վատ լինելը քաջ իմացած լինելով և արդէն էլ կառավարութեան պատրաստած որոգայթն էլ իրանց արևու նման ծանօթ լինելով, Մատթէոսին նախապատիւ են համարում Գէորգի վրայ. նրա բրօթէսթանդների և պապականների հետ մաքառիլն ու մի քանի գրքերի վրայ իր անունն ունենալը և առհասարակ Պոլիս երթեւեկող վաճառականների մէջ ժողովրդականութիւն ստացած լինելը, քիչ շատ Հայոց գրքեր կարդացող եկեղեցականաց և աշխարհականաց և մանաւանդ տէրութենական բարձր պաշտօնաւորների և աստիճանաւորների մէջ իբրև թէ՝ անուն հանած է համարւում. իսկ Գէորգ, ոչ այնքան ժողովրդական և ցաւալին այն է, իր ցոյց տուած բարեկամութիւնն Կոստանդին Աւագ իշխանին, որքան նպաստաւոր մեկնուած ու հրաչակուած է լինում տէրութեան մեծամեծների առջև Այվազեան Յովհաննէս աղայի միջնորդութեամբ, այնքան Հայոց ուսումնականաց առջև վատ աղդեցութիւն արած է լինում իբրեւ հոգւով մարմնով Ռուսաց մարդ նկատուած, մինչեւ որ Գէորգ Մոսկուա.քի են անուանում Պուրսայու առաջնորդին։ Այս կարծիքն արդէն Գէորգի մասին տարածուած է լինում ոչ միայն Պէտրբուրգ և Մոսկուա, այլ Բեսարաբիա, Նոր Նախիջեւան, Թիֆլիզ, Էջմիածին և ուրիշ տեղերի աղդային ղդացմունք ունեցող Հայոց մէջ։ Իսկ Մատթէոսին նկատում են իբրեւ ջերմ եռանդով ոգեւորուած ծերունի մարդ Հայաստանեայց եկեղեցին պաշտպանելու, որ իր ատենաբանական տաղանդին հետ միացնում է նաև իր դրիչն և վեր է կենում, իբրեւ թէ, ինչպէս եկեղեցիումը, այնպէս էլ հրապարակումը պաշտպանում է իր եկեղեցին և աղգը բողոքականաց և պապականաց դէմ։ Ուստի սրա ջերմ եռանդն ու խօսուն լեղուն բաւական են համարում, Ռուսական քաղաքականութեան դէմ առնելու, Թուրքիոյ Հայքը գործի չանելու կամ իրանց եկեղեցիումը կամ իրանց ուրիշ անուղղակի միջնորդականութեամբ, յայտնում են իրանց կարծիքը տէրութեան թէ

այդ երկու ընտրելայուններէն, այսինքն Գէորգի վրայ Մատ-թէոսին նախապատիւ կը համարէ, ոչ թէ միայն Հայոց աղ-գի կարծիքի վրայ հիմնուելով, այլ նաև իրրեւ աւելի օգ-տակար մարդ տէրութեան ծառայելու։ Անմիջապէս Կովկա-սու փոխարքայն այս խորհուրդ ստանում է թէ՝ նրանցմէ որոնց հարցուցել էր, յայտնում է միևնոյն ժամանակ իր կամքն թէ Էջմիածին գնացող պատգամաւորներին, թէ Պէտրբուրգ թէ Պոլսոյ դեսպանին, Էջմիածին գնացող Թիֆլիզու պատ-գամաւորը, ճանապարհին է ստանում սուրհանդակի ձեռ-քով տէրութեան հրամանը Մատթէոսի համար ձգելու և ձգելատալու և ուրիշ պատգամաւորներին ընտրութեան քուէն։ Մի և նոյն հրամանը տրւում է նաև Թուրքիոյ Հայոց կողմէն ընտրուած երկու պատգամաւորներին, Աբէլ Գուրգէնբէգ-եանցին և Խահակ Թումանեանցին։ Ահա՝ քեզ երեք պատ-գամաւոր առաւելագոյն ձայն ստանալու համար և միւսները ոչնչացնելու և Էջմիածնի միաբանութիւնը պապանձեցնելու և նրա ազդեցութիւնը ջնջելու Կաթողիկոսի ընտրութեան գործին մէջ։

Էջմիածնի միաբանութիւնը կաթողիկոսների ընտրութեան մէջ միշտ անկեղծ, միշտ օրինաւոր և շատ քիչ անգամ սխա-լած է եղել, այս բանն ինչպէս իրանք նոյնպէս և պատմու-թիւնը կը հաստատէ։ Միայն թէ, կասեն, աղգն ուրիշներէ խաբուելով քանի որ անգիտութեամբ, կամակորութեամբ և կուսակցութեամբ շարժում է ընտրողութեան մէջ, միշտ սխա-լում է միշտ անյաջող է դուրս դալի։ Արղութեանց Յովսէփ ե-պիսկոպոսէն սկսած, որ Ռուսաստանի Հայոց նուիրակ էր Էջ-միածնի կողմէն, խուսափութիւն, երկպառակութիւն և անյա-ջողութիւնը պակաս չէ Էջմիածնի միաբանութեան մէջ կաթո-ղիկոսի ընտրութեան համար։ Միաբանութիւնն այն ժամա-նակ Պոլսոյ աղգայնոց կամակցութեամբ Էջմիածնի տաճարին և Պոլսոյ Մայր եկեղեցիումը Դանիէլ Պատրիարքին Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրելէն յետոյ ամեն կարգի խառն ժո-ղովրդականացմէ, արտաքին աղդեցութեամբ շարժուած, այդ ընտրողութիւնն աղգայնոցմէ ոմանք իր կատարին չհա-սուցին և արդէն ընտրուած կաթողիկոսին Եւդոկիայում ե-ղած ժամանակ, Պոլսոյ Ռուսաց դեսպանի թելադրութեամբ՝

նորէն ընտրում են Արղութեանց Յովսէփ եպիսկոպոսին, որն որ այնքան խռովութեանց և թշուառութեանց պատճառ եղաւ և ինչպէս Էջմիածնի միաբանութիւնը, նոյնպէս և ազգը Դաւթեանց և Դանիելեանց կուսակցութեանց բաժանեց։ Դրամէն յետոյ Եփրեմի ընտրութիւնն էլ դժբաղդ եղաւ, այնպէս որ ողորմելի Եփրեմն իրան վշտալի Կաթողիկոս կանուանէր և յերաւի վշտով և ցաւով էլ իր Կաթողիկոսութիւնն անց կացաւ։ Եփրեմի նախ հրաժարել տալուց և յետոյ վախճանելէն ետեւ յոյս կար, որ մի օրինաւոր ընտրութիւն կը լինի Բրիստոնեայ Տէրութեան հովանաւորութեան տակ և Հայաստանեայց Եկեղեցւոյ կարծուած աղատութեան ժամանակ։ Բայց Ռուսաց շահախնդրութիւնը և այն ժամանակուայ Հայաստանեայց Եկեղեցւոյ ցաւալի դրութիւնն 'ի դերեւ հանեցին կրկին Հայոց Ազգին իրաւունքն ու ակնկալութիւնը Կաթողիկոսի ընտրութեան մէջ և Տէրութեան կամեցողութեամբ ու յայտնի ներգործութեամբն ընտրուեցաւ ամենայն Հայոց Կաթողիկոս Կարբեցի Յովհաննէս եպիսկոպոսն ընդդէմ միաբանութեան և Հայոց ազգի կարծիքին։ Յովհաննէս Կարբեցւոյն թոյլ Կաթողիկոսութիւնը յայտնի է իր ժամանակուայ անցկացած իրերով; որոնցմէ, առաջինն է Հայաստանեայց Եկեղեցւոյն մի կանոնաւոր դերութեան ներքեւ ընկնելը 1836 թուի կարդադրութեամբ։ Թուրքիոյ Հայոց ժողովրդէն բողոքվին թէ Եկեղեցականօրէն և թէ Ազգայնօրէն ամեն հաղորդակցութեան դադարելը և առ հասարակ Ռուսիոյ Հայոց ազգային, բարոյական և մտաւորական թշուառ վիճակովը մանաւանդ Եկեղեցականաց։ Յովհաննէս Կաթողիկոսի ժամանակ Թուրքիոյ Հայոց շարժումը թէև մի փոքր ազդեցութիւն է անում Ռուսիոյ ազգայնոյ մի փոքր մասին վրայ և այլևայլ ձանք և փորձ լինում է Ազգային դասակարգութիւնը կենդանացնելու, բայց ոչ մինը չյաջողում և Յովհաննէսի անուսումնութիւնն ու թոյլութիւնը պատճառ է կարծւում լինի։ Սրամէն ժողովուրդն իր յոյսը դարձնում է Ներսէսի վրայ, յիշելով նրա մեծագործութիւնքն ազգաշէնութեան մէջ։ Ժողովրդեան այս յիշողութիւնը քանի դնում, լինում է մի զգացմունք և որոշում է նրա մէջ մի ընդհանուր կարծիք նրան Կաթողիկոս ընտրելու Յովհաննէսի վախճանելուց յետոյ։ Յովհաննէս վախճանում է թէ

չէ՝ երեք կուսակցութեանց է բաժանուում Ազգը Կաթողիկոս ընտրելու համար։ Էջմիածնի միաբանութիւնը կամենում է, Երուսաղիմի Զաքարիա Պատրիարքին ընտրել, մի ուրիշ կուսակցութիւն Կարապետ Եպիսկոպոսին Էրզրումի նախորդ առաջնորդին։ Բայց ժողովրդային կարծիքը կամենում է միշտ Ներսիսին։ Այն Ներսիսին, որ տասնուչորս տարի ծերածել հիւծուել էր, իր նշանակութիւնն Ազգին մէջ դրեթէ նուազուել էր և այն ասպարէզն որու մէջ կարող պիտի լինէր նա աստուածաբանական ընթանալ դէպի Եկեղեցւոյ և աղգի պայծառութիւն, հազար տեսակ արգելքով և խափանիներով պատսպարուած էր, նրա առջեւ դրուած էր մի Պալաժէնիա, միւս կողմն էր Հայոց ժառանգական աղնուականութիւնը, որուն միջոցով ցերութիւնն ամեն կերպով խափան կարող էր լինել Կաթողիկոսի ձեռնարկութեանց։ Միւս կողմէն էլ Ռուսական քաղաքականութիւնը, որ նոր բոլորովին նոր բան էր Հայաստանեայց Եկեղեցւոյ պաշտօնէից համար։ Մի դէն կը թողունք Նիկողայոսի հաստատած անհատնում, խափանարար, երկարաձգող, կցկցուն և խծբծուն օրէնքներն որոնք ամեն կարգի մարդկանց համար այլեւայլ և անհաւասար էին և բաւական Ներսիսի ոտքն ու ձեռքը կապելու, որ ոչինչ չգործէ։ Բայց ամենէն աւելի Ներսիսի Կաթողիկոսութիւնն 'ի դերեւ հանող հանգամանքն այն ժամանակուայ Հայոց աղգային և բարոյական վիճակն էր, 1820 1825 թուերի Հայքը 1844 ին 1850 ին 1855 ին նոյնը չէին, այլ բոլորովին փոխուել էին Ռուսական տիրապետութեան տակ շատ բաների կողմէն, աղգային զգացմունքն սրտերէմէն դուրս էր եկել, Հայկական բարքն ու վարքը խանդարուել էր, Ռուսական տարերքը դրեթէ մի աստիճան ընաւորուել էր Հայոց ժողովրդեան վրայ։ այն ժողովուրդն որով կարող էր Հայոց Եկեղեցին գործ տեսնել հեռացել, պաղել էր իր Եկեղեցիէն և եկեղեցականներէն։ Անկեղծ և աննենգ մարդիկ էլ իրանց դրութիւնն ընկերութեան երեսին չէին կարող պահպանել, ուստի Ներսիսի չորս կողմ պիտի լինէին մի շատ խորամանգ, բաղդախնդիր, փառամոլ և դաւաճան մարդիկ ամեն կարգէ և ամեն աստիճանէ, որոնք ամեն կերպով նրա գործողութեանց խափանարար էին լինում։ Ուստի և Ներսէս ոչինչ բան

կարող չեղաւ մինչեւ իր կատարը հասցունել և դրեթէ մինակ մնաց, թէ եկեղեցականացմէ և թէ ժողովրդականացմէ խաբուելով և վերջապէս բոլորովին նրա նշանակութիւնը ոչնչացընելու համար Տէրութեան կողմէն բարձր պաշտօնեայք մինչեւ անգամ բոլոր Ռուսաստանի մէջ տարածեցին թէ՝ Ներսէսն ցնորուել է, գժուել է, խելքին է եկել։ Ահա այսպէս դիւցազն ծերունին գերեզման մտաւ իր կեանքովն ու մահովը նահատակ լինելով իր Եկեղեցւոյն և իր Ազգին համար։

Այս ամեն դէպքերը, բայց ոչ ինչպէս որ մենք այս տեղ յառաջ ենք բերում ընթերցողին աչքին, այլ նաև իրանց մանր մունր հանգամանքներովն և դեռ ևս մեղ ու ամբողջ Ազգին անծանօթ եղած իրերովն Էջմիածնի միաբանութեան եթէ ոչ ամենին, գոնէ ծերագոյն մասին մտքէն կանցնէին և մի տեսակ յուսահատութիւն կը պատէր նրանց սիրտը. թէ որ կը համարձակէին իրարու յայտնել, 'ի հարկէ կը յայտնէին իրանց զգացած ցաւը միմեանց, եթէ ոչ, ամեն միաբան իր սրտումը կզգար, մտքումը կը տրորէր այն և կարող չէր լինում խօսքով և գործով յայտնել, որովհետեւ իր չորս կողմը բռնակալութիւնն իբրև համատարած օդ տարածուել էր։ Կարծիք չէր կարող յայտնել վասն զի Տէրութեանը, Ազգինը և միաբանութեան մէկ մասինը իրան կարծիքին դէմ էին. ո՞ւմ դէմ կռուել, և ի՞նչպէս։ Բայց և այնպէս Ղուկաս Եպիսկոպոսն Արագածունին բացարձակ յայտնում է իր անհաւանութիւնը թէ Մատթէոսի և թէ Գէորգի համար կաթողիկոս ընտրուելու։ Նա իր մտքումը դրած է լինում անպատճառ Պօղոսին ընտրել տալ ինքը նրա մասին քուէ տալով և միաբանութեան էլ ձգել տալով. Բայց երբ տեսնում է, որ Թիֆլիզու պատգամաւորք և նրանց հետ միասին եկեղեցականացմէ ոմանք պնդում են, «արիւն ձեր 'ի գլուխ ձեր», ասելով, ձեռները լուանում, ու յետ է քաշւում։ Կը պատմեն թէ Թիֆլիզու պատգամաւորք ամեն միաբանների խցերը մտնելով առանձին առանձին, մերթ խոստմունք տալով նրանց, մերթ համոզելով, և մերթ սպառնալով բռնադատել են նրանց Մատթէոսի համար քուէ տալ։ Բայց Ղուկաս Եպիսկոպոսն կասէր մեզ թէ իրան ասողներ են եղել պատգամաւորներէն, թէ Տէրութեան կամքն անպատճառ Մատթէոսին ընտրել է

և որովհետեւ Տէրութիւնը Տէրութիւն է, հարկաւ իմաստուն էլ է, անխալ էլ և նա երբէք ոչ մեղք կը գործէ, ոչ յանցանք, ուստի նա իրանցմէ, միաբանութենէ և Հայոց ազգէն լաւ գիտէ թէ ո՞վ պէտք է ամենայն Հայոց Կաթողիկոս լինի. բայի այս յանկի խօսքերէն, կասեն նաեւ թէ Աբէլ Գուրգէնբէգեանցն ասած լինի միաբաններին, թէ որ Մատթէոսին համար քուէ չեն տալ, Տէրութիւնը մի վաշտ զօրք է պատրաստած Էջմիածնի կշտին և ինքը կարող է հրաման տալ, որ դայ այդ սուինաւոր վաշտը բոլոր միաբաններին դուրս հանէ ծեծէ, փետէ, ոմանց բանտ դնէ, ոմանց Սիպիր աքսորէ. Այս խօսքերը մենք Էջմիածնի միաբաններէն ենք լսել, իբրև թէ Տէրութիւնն այնքան իշխանութիւն ունի Էջմիածնի միաբանութեան վրայ որ եթէ կամենայ, կարող է, Կաթողիկոսէն սկսած մինչեւ վերջին փոքրաւորին ձեռքէն բռնել և վանքէն դուրս հանել, աքսոր քշել, կարգընկէց անել և այլ բռնաւորական և բռնաբարական բաներ անել.

Ահա՛, այսպէս, ահ ու սարսափ տալով միաբանութեան և Հայոց ժողովրդի բերանը խցելով և մի քանի մեծամեծների վառասկրութիւնը յաղեցնելով Օրթաղիւղի քարոզիչ Մատթէոսին ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրել է տալի Ամենողորմած և Ամենաբարեպաշտ Կայսրն ամենայն Ռուսաստանեայց և յեւոյ անուն է հանել տալի իբրեւ թէ, Հայք իրանց համար Կաթողիկոս ընտրեցին, մանաւանդ Թուրքիոյ Հայք իրանց ամենասիրելի Մատթէոսին ընտրեցին.

Ա՛ռ քեզ մի ամենամեծ աղդասպան սուտ, որնոր միմիայն Ռուսաց կառավարութեան դանդումը կստեղծուի, մի ազգիր ազգէն ղղուեցնելու համար, կառավարողներն իրանց կառավարողներէն սառեցնելու և բաժանելու համար. Ինչպէս այն ժամանակ, որու վրայ խօսում ենք, նոյնպէս և այսօր Ռուսիոյ բոլոր Հայերն այնպէս համոզուած են և գիտեն թէ, Տաճկաստանի Հայք իրանց հոգեւոր և դերագոյն ժողովներովն իրանց վիճակների պատգամաւորներովն ընտրած են սաստիկ փափաքելով Մատթէոսին ամենայն Հայոց Կաթողիկոս. Խորամանկութիւն խորամանկութեանց. Երբ Մատթէոսին վերջին ժամանակներն ինչ անձ լինելն էլ բոլորովին յայտնուեցաւ մեծին և փոքրին Ռուսաստանի մէջ, այս խօսքերն

էին առ հասարակ ամենուն բերնէն լսում։ Վայ ձեզ Պոլսեցիք, այս ի՞նչ վարձանք մեր դլխին հանեցիք. Վայ ձեզ Պոլսեցիք, Ազգի տունը տեղը քանդեցիք, այս ի՞նչ մարդ մեզ հոգեւոր տէր ընտրեցիք։ Մի՞թէ ձեր ամենէն խելօք Եպիսկոպոսն սա էր, մի՞թէ մի ուրիշ մարդ չկար այն տեղ։ Տէրութեան կողմէն էլ նոյն խօսքերը կասուէին, եկեղեցականաց մէջ էլ, թէ նա մեր օրէնքը չի իմանում, Թուրքիոյ մարդ է, ծերացել է, և այլ հաղար տեսակ խօսք, որոնք ամենքն էլ հակառակ էին դրա ընտրելի եղած ժամանակ ասուածներին։

Մատթէոսի ընտրուելն այսպէս է լինում Ռուսահայոց մէջ, մի տեսնենք թէ Պոլսումն ի՞նչպէս է եղած. կասեն և մենք էլ լսել ենք Պուրսայու առաջնորդ Գէորգ Եպիսկոպոսէն, թէ 1858 թուին Ազգային վարչութիւն իրանց ձեռին ունեցողներն որոնք Տատեանք և Պալեանք են եղել, իրանց ստեղծած ու պաշտպանած մարդկանցով Յակոբոսին խաբելով և հաւատացընելով թէ Ռուսահայք Մատթէոսին են ընտրել կաթողիկոս, հրաւիրել են նրան իմացունել բոլոր Տաճկաստանի հայոց առաջնորդներին, որ իրանց շնորհաւորութեան թղթերը գրեն Մատթէոսին, միևնոյն ժամանակ իրանց յարգանքը ու մեծարանքը մատուցանելով նրան։ Այս թղթերը որ ստանում են, ասում է Գէորգ Եպիսկոպոսը, մեր ամիրայք, յառաջ են հանում Ռուսաց դեսպանին այդ կամքն իբրև ճշմարիտ համարելով, իսկ նա էլ իսկոյն իմաց է անում ուր որ հարկն է։ Այսպէսով կասէ Գէորգ, իմ ընտրութեան խափան եղան նրանք ու իրանց նպատակին հասնելու համար Մատթէոսին ընտրել տուին. թէ ի՞նչ է այս նպատակն, այս յիշատակարանիս ընթացքումը կը յայտնուի ընթերցողին։

# ԲԱՆԱՔՆՆԱԿԱՆ

---

## ՊԱՊԻՆ

### ԳԼԽԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

### ՀՆՈՒԹԵԱՆՑ ՀԱՄԵՄԱՏ ՓՈՐՁՈՒԱԾ

Ս. Կ. Զ–Լ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Որչափ ազգերը դիմում են դէպի լուսաւորութիւն և հետամուտ են լինում ճշմարտութեան, այնչափ պապական ահռելի և անհեթեթ սկզբունքը դդալի և չօշափելի է լինում ամենի համար։ Ուստի՝ եթէ աչքէ անցնենք մարդկային ազգի ընդհանուր դրականութիւնը, միջնադարեան կապանքներէն ազատուելէն սկսած մինչեւ մեր օրերը, դրքերի մեծ մասը դրուած կը տեսնենք պապականութեան և պապի գլխաւորութեան դէմ։ Պապականութեան այլանդակ խնդիրը կարծես թէ մի անհնանալի և անվերջանալի խնդիր է դարձած մարդկութեան մէջ։ Հաղարաւոր խնդիրներ եկել, լուծուել, անցել ու գնացել են, բայց պապականութեան խնդրոյն վրայ այսօր դեռ քննութիւններ են լինում և տակաւին պապը կարծում է թէ ինքը ընդհանրական գլուխ է Քրիստոսի Եկեղեցւոյն երկրիս վրայ, և արքայութեան ու դրժոխոց բանալիներն իր ձեռին ունի, որ ուզածին պէս արքայութեան դուռը փակէ և իր գլխաւորութիւնը չընդունողներին դժոխքն ուղարկէ։ Զարմանալի՛ այլանդակութի՛ւն։ Պապականութեան սկզբունքին և մարդկութեան յառաջադիմութեանը նայելով՝ արդէն կարելի է բացարձակ դուշակել որ մի քանի ժամանակից յետոյ արքայութիւնը բոլորովին ամայի պէտք է մնայ, պապի ձեռքով դռները փակուած ընդհանուր մարդկութեան առջեւ նոյն իսկ պապը արտաքոյ դրան։

Զարմանալին այս է, որ որչափ մարդկութիւնը խորշում է պապականութեան վրայ խօսելէն, այնչափ պապականութիւնն առիթ է տալի խօսելու. որչափ մարդիկ մերժելով մերժում են պապականութեան սկզբունքը և պապի դլխաւորութիւնը, այնչափ պապը պնդում է իւր դլխաւորութիւնը։ Ա՛ռ քեզ տարօրինակ և երեւակայական դլուխ, որ անդամներ չունի և դարձեալ դլխաւորութիւն է պնդում։

Պապականութիւնը եթէ բան չունի, թող դլխաւորութիւն քարոզէ, մարդկութիւնը վաղուց անդէն մերժել է այդ երեւակայական պատրանքը, որ միջնադարեան այլանդակ ուղեղների ծնունդ է և ոչ նախնի դարուց Քրիստոնէութեան և նոր դարուց լուսաւորութեան և այս մասին եղած անթիւ ապացոյցների մէջ՝ ահա մի նոր ապացոյց էլ այս նոր հրատարակուած դրքոյկը «ՊԱՊԻՆ ԴԼԽԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՀՆՈՒԹԵԱՆՑ ՀԱՄԵՄԱՏ ՓՈՐՁՈՒԱԾ» վերնագրով, որ մեծ հաճութեամբ կարդացինք։

Այս փոքրիկ դրքոյկը, որչափ և բովանդակութեան կողմէն համառօտ, այնչափ իմաստների և փաստերի կողմանէ հաստատուն, դատաւորութեան կողմանէ պատշաճաւոր և յարձակողական կողմանէ խիստ համեստ է, և չափաւոր։ Անմերժելի ապացոյցներով հաստատուած է այս դրքոյկիս մէջ, որ պապի դլխաւորութիւնն ոչ միայն ընդդէմ է Աւետարանի և Քրիստոնէական հոգւոյն, այլ և բոլորովին անծանօթ է նախնի եկեղեցւոյն, նախնի տիեզերական ժողովների, նախնական ծիսադրքին, նախնի հարց սուրբ գրոց մեկնութեանց և մի ամենամեծ խարդախութիւն է, որով Արեւմտեան Եկեղեցին երկար ժամանակ խաբուեցաւ. իսկ Արեւելեան Եկեղեցիները միշտ համարած են պապի դլխաւորութիւնը մի կատարեալ յափշտակութիւն և բացէ՛ի բաց մերժած են։

Ցաւումենք որ այսպիսի օրինաւոր փաստերի վրայ հիմնած դրքոյկի լեզուն համապատասխան չէ իր ներքին արժանաւորութեանը, միմիայն Պօլսեցւոց յատուկ դարձուած քներով և ոճով գրուած լինելուն և ոչ ընդհանուր ազգայնոց համար և մի քանի բառեր, ինչպէս ասէ, անէ, հոս, հոն, ինձալո՞, երցին, աղբեցո՞ւնիններն, ասիկա, անիկա, անկէց, զանոնք, ճանաչնիս, ուրենիս, և այլն անչքացնում են դրքի վայելչութիւնը և բնաւ

չ'է կարելի ասել թէ գրքի դիւրամատչութեան համար են գործ դրուած, վասն զի այն ընթերցողը որ պիտի հասկանայ գրքի մէջ եղած միւս բառերը, ինչպէս են ենթադրութիւն, առանձնաշնորհութիւն, հրահանգական, երկոտասանաձիւղ, էրականութիւն և այլն, անշուշտ կը հասկանար եթէ փոխանակ գրելու ասի, ան, հոս, հոն, ինձ, իրեն. գրուէր այս կամ ա, այն կամ նա, այս տեղ, այն տեղ, ընդունել, կարդալ կամ կարող եղան։ Ինչ և իցէ մենք դարձեալ շատ ուրախ ենք այսպիսի մի գրքի հրատարակութեան մասին, վասն զի թէպէտ լուսաւոր մարդերի համար մի երեւակայական ցնորք է պապի գլխաւորութիւնը, բայց քանի որ կան տակաւին պապականութեան կոյր յարողներ, յամառ պաշտպաններ, և քանի որ այսօրուան օրս տեսնում ենք մեր աչքով մեր ազգի մի մասը պարզմտութեամբ որս եղած պապական գլխաւորութեան պատրանքներին և կրօնական երկպառակութեան առիթ դարձած, քանի որ իրողութիւնը տակաւին այս ընթացքի մէջ է, ուրեմն հարկաւոր են և պապականութեան դէմ գրուած հրատարակութիւնք։ Ուստի՝ ոչ այնքան մեր բուն Հայոց, որքան մեր պապական Հայոց կը յորդորենք, որ կարդան պապի գլխաւորութեան դէմ հրատարակուած այս նոր գրքոյկը, կը յորդորենք մանաւանդ Հ. Յ. Գաթրճեանին, որ անցեալ տարի իր ծանօթուռ, հալածասէր, անքրիստոնէավայել և մարդատեցութեան ոգւով տոգորուած Տրէնտ-ին գրքով քարոզ հանդիսացաւ պապականութեան և մանաւանդ պապի գլխաւորութեան և անամօթ յանդգնութեամբ չ'ամաչեցաւ Հայաստանեայց Եկեղեցին «մոլորեալ» կարծեցնել պապի գլխաւորութիւնը յաւիտեան մերժելուն համար։

---

ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ
ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆ

---

Կ. ՊՕԼԻՍ, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԵՆԻ Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆ